

59

9 4

Ա. ԳԻՐԻՆԻՍ

Պոլետարներ բոլոր յերկրների, միացեալ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՇԵՍ-
ՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
№ 19

ԻՆՉ Ե ԱՐՃԵՍՏԱԿՑԱԿԱՆ
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

ՌՈՒՍ. Յ.ՐԴ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ.

Թարգ. Հ. ՏԱՐՍԵՆՅԱՆ

1925

ՅԱՐԵՎԱՆ
ՏՐԵՍԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱԿ
1925

ՀԱՄԽ-Ի ՀՐԱՏՈՐԱԿՈՒԹՅԱՄԲ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Ս. ԳԻՐԻՆԻՍ


№ №

1. Բանվորական շարժման պատմութիւնը Անգլիայում Զրանսիայում և Գերմանիայում:	Ս.ԲԿ-Ս.Գ	»	—	75	կ.
2. Գործարկումների և տեղկումների ուղեցույց:	—	»	1	—	
3. Աշխատանքի որենսդիրք:	—	»	—	15	
4. Պրոֆեսիոնալ շարժումը Ռուսաստանում:	Ս.ԳՆՈՇԿԻՆ	»	—	60	
5. Գործարկումների և տեղկումների անխիճները:	ՍԵՆՅՈՒԼԵՅԻՆ	»	—	25	
6. Սոցիալական ապահովագրութիւնը:	Քաբրիկան	»	—	20	
7. Ակնարկներ Առեւելքի բանվորական շարժման մասին: (սպառնալիք):	Նյգուսի	»	—	50	
8. Արհմիութիւնների խնդիրները և գործելակերպը (սպառնալիք և):	Լազոզսկի	»	—	30	
9. Հոսանքների պայքարը համաշխարհային արհեստակցական շարժման մեջ (սպառնալիք):	Լազոզսկի	»	—	15	
10. Սիֆիլիս:	Բժ. Մեյիֆլանի	»	—	5	
11. Մ լարիա:	Բժ. Կառապետյանի	»	—	5	
12. Յերեք Ինտերնացիոնալ:	Խոսցեցիւր-Վկա	»	—	5	
13. Բանվորների և ծառայողների ապահովագրումը հաշմանդամութեան դեպքում:	Բիլոզսկի	»	—	20	
14. Աշխատանքի հաշմանդամների ապահովագրումը հաշմանդամութեան դեպքում:				20	

ԻՐԱՆ Ե ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

ՌՈՒՍ. 5-ԲԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ.

Թարգ. Հ. ՏԱՐԱԽԶԵԱՆ



ՅԵՐԵՎԱՆ
ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
1925

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Յերբ ֆրանսիացի տնտեսագետ Պրուդոնը հրատարակեց «Ի՞նչ է սեփականությունը» վերնագրով գրքույկը, Կարլ Մարքսն այդ առթիվ գրեց «Հարցը ճիշտ չէ դրված, և այդ հարցին ճիշտ ել պատասխանել չի կարելի»: Բուրժուական սեփականությունը տարբերվում է փեոդալականից (ճորտատիրականից), իսկ վերջինս տարբերվում է ստրկատիրականից համ նախնականից: Տարբեր ժամանակներում սեփականությունը տարբեր ձևեր է ունենում:

Նույնպես ել հնարավոր չէ «բոլոր ժամանակների և ազգերի համար» ճիշտ վորոշում տալ, թե՞ «ի՞նչ է արհեստակցական միությունը»:

Մի շոշափելի (կոնկրետ) որինակ.

«Կապիտալիզմի զարգացման սկզբում արհեստակցական միություններն,— իբրև անցումն բանվորների ցրված ու անզոր, անոգնական դրությունից դեպի դասակարգային միացման սեպ-մեքը,— բանվոր դասակարգի համար մի հսկայական առաջադի-մություն, պրոգրես եյին: Յերբ սկսեց աճել պրոլետարների դա-տակարգային միության բարձրագույն ձևը՝ պրոլետարիատի հե-զափոխական կուսակցությունը՝ այն ժամանակ արհեստակցա-կան միություններն անխուսափելիորեն սկսեցին յերևան բերել վերոց ուսկցիոն, հետադիմական գծեր, վորոշ հակումն դեպի ասպիրանտիզմ *), մի վորոշ քարացածություն և այլն (**):

«Կապիտալիզմի ժամանակ գործադուլային պայքարի վերջ-նական նպատակը պետական ապարատի կործանումն է, տվյալ դասակարգային պետական իշխանության օտպալումը: Իսկ ան-ցողական տիպի պրոլետարական պետության ժամանակ, բանվոր դասակարգի յուրաքանչյուր յելույթի վերջնական նպատակը կարող է լինել միմիայն պրոլետարական պետության և պրոլե-տարական դասակարգային պետական իշխանության ամրացումը՝ այդ պետության բյուրոկրատական խեղաթյուրումների, նրա

*) Մի հոսանք, վոր քաղաքականությամբ չի զբաղվում, քաղաքականությունից իրեն հեռու յե պահում: Կամ՝

**) Լենին. «Չախություն յերեխայական հիվանդություն» հատոր XVII.

ՏՐԵՍԻ ԱՌԱՋԻՆ ՏԳԱՐԱՆ

Դրանեպ. 2075

Գառ. 2977

Տիրաժ 3000



11-242269

սխալների և թուլությունների, նրա հսկողության տակից դուրս պոկվել ցանկացող կապիտալիստների դասակարգային ախորժակներին դեմ կռիվ մղելու միջոցով և այլն: *)

Միշտ պիտի հիշել, վոր զանազան ժամանակներում և զանազան յերկրներում արհեստակցական շարժումը տարբեր բնավորություն է ընդունում:

Հենց այդ պատճառով էլ, վորպեսզի լավ պատկերացվի, թե ինչ է արհեստակցական միությունը, անհրաժեշտ է հարցըն ուսումնասիրել պատմականորեն. ինչպես է նա ծագել, զարգացել, փոխելով իր ձևերն ու խնդիրները նայած այս կամ այն յերկրի տնտեսական-քաղաքական պայմաններին:

ՎԱՏՊԵՏԱՑՈՒՆԵՐԻ (ПОДМАСТЕРЕ) ՄԻՈՒԹՅՈՒՆԸ.

Գար ժամանակ, յերբ գործարաններ ու զավոդներ չկային: Առանձին խազեյին-արհեստավորներն աշխատում էին իրենց արհեստանոցներում վարպետացուների հետ միասին, իսկ առևտրականը գնում էր նրանց մշակած գործվածքները և ծախում շուկայում: Առևտրականն, ի հարկե, գնելիս աշխատում էր, վորքան կարելի չի, վարպետին եծան վճարել նրա ապրանքի համար: Կամաց կամաց արհեստավորը դառավ առևտրական կապիտալիստի ստրուկը: Արհեստավոր-խազեյիներն էլ իրենց հերթին սկսեցին ավելի ուժեղ ճնշել վարպետացուներին՝ յերկարացնել բանվորական որը, կրճատել աշխատավարձը: Զգալով այդ ճնշումը, վարպետացուները սկսեցին դիմադրություն կազմակերպել: Բայց մենակ ամենքն էլ անզոր են, և շուտով նրանք հասկացան, վոր անհրաժեշտ է միանալ:

Վարպետացուների առաջին միություններն զբաղվում էին գլխավորապես փոխադարձ ոգնությամբ: Նրանք իրենց անդամներին տալիս էին զանազան նպաստներ, հիվանդանոցներում մահճակալներ էին պահում և ցույց էին տալիս «ճանապարհի ոգնություն», այսինքն անգործ անդամին ճանապարհածախս էին տալիս, վորպեսզի նա մի ուրիշ քաղաքում կարողանար գործ գտնել: Միևնույն ժամանակ վարպետացուները իրենց հարցստահարող-խազեյիների դեմ կռվում էին գործադուլով և բռնկոտով:

Արտաքինից կարող է այնպես թվալ, թե վարպետացուների միությունները միևնույնն են, ինչ վոր արհեստակցական

*) Ռեկե կենս. կոմի թեզիսները, 1921 թ.

միությունները, գոնե բուրժուական յերկրներում. թե առաջինները և թե յերկրորդները ոժանդակություն են ցույց տալիս իրենց անդամներին, թե մեկը և թե մյուսները գործադուլներ են արձակում: Բայց իսկապես, վարպետացուների միությունների և արհեստակցական միությունների միջև կա հսկայական տարբերություն:

Վարպետացուները բացառապես միացան ըստ համաբուրությունների, ուստի և նրանց միությունները շատ մանր էին և ցածր ու ցրիվ: Յուրաքանչյուր համաբարային միություն մըցում և կռվում էր վարպետացուների մյուս համաբարային միությունների հետ, ճիշտ այնպես, ինչպես և զանազան համաբուրությունների պատկանող մանր տերերը մըցում և կռվում էին իրար հետ: Վարպետացուները չէին գիտակցում, վոր բոլոր շահագործվողների շահերը մեկ են, շահերի համեղաշխության (ընդհանրության) գիտակցություն չկար: Նրանք դեռ ևս կարող էին ըմբռնել միևնույն համաբարության միավորման ոգտակարությունը ամբողջ յերկրի և նույնիսկ միջազգային մասշտաբով, բայց բոլոր համաբարությունների միացման («միջմիությունական միավորում», ինչպես մենք հիմա յենք ասում) գաղափարին վարպետացուները չհասան: Յեվ վոր գլխավորն է, վարպետացուների միությունները կռվում էին միայն իրենց տերերի դեմ և վոչ թե առևտրական—կապիտալիստների դեմ, վորոք արհեստավորների շահագործման սկզբնապատճառն էին: Դրա համար էլ նրանց կռիվը հենց սկզբից անհաջողություն էր մատնված: Արհեստանոցների տերերը քայքայվում, կործանվում էին, վարպետացուների միությունները՝ քանդվում, իսկ կապիտալիզմը զարգանում էր:

Աստիճանաբար մեծաքանակ գնորդներն իրենք սկսեցին կազմակերպել իրենց հարկավոր ապրանքների արտադրությունը՝ առևտրականները դարձան արդյունաբերողներ: Առաջ յեկան գործարաններ, յերեացին մեքենաներ,—և բանվորների մասսաները դեմ դիմաց գտնվեցին իրենց շահագործող տերերի հետ:

Բանվորները ստիպված յեղան նորից միանալու, վորպեսզի դիմադրեն դաժան շահագործմանը և մի փոքր լավացնեն իրենց ծանր դրությունը: Սակայն մի անգամից չիր, վոր նրանք միացան արհեստակցական միությունների մեջ: Սկզբում բանվորների մասսայական յերույթներն արտահայտվեցին գործարանային խռովություններով (բուլնաերով), գործանատերերի սպանությամբ

և մեքենաների ջարդելով: Նույնպես փորձեր յեղան տարբեր արհեստներում: Երբեք չէր ընդհանրվում մի միության մեջ միավորելու համար:

Այդ տեսակ ընդհանուր միությունները, բնականաբար, ամբողջ բանվոր դասակարգի համար ընդհանուր պահանջներ ելին: Դժուար, վորոնք և այդ պատճառով ավելի քաղաքական բնույթ էին կրում, քան թե տնտեսական: Սակայն շուտով բանվորները համոզվեցին, վոր գործարանային խռովություններն ու մեքենաներ ջարդելը կովի սխալ ճանապարհներ են: Նրանք հասկացան, վոր չարիքը մեքենան չէ, վորը մարդկություն համար ոգտակար է, այլ այն, վոր կապիտալիստը նրանով ոգտվում է մասնավոր սեփականության իրավունքով, աշխատանքը շահահորժելու նպատակով: Ինչպես վոր Մարքսը գրում էր ի հոշակավոր «Կապիտալ» գրքում. — «հարկավոր է վորոշ ժամանակ և փորձառություն, վորպեսզի բանվորը սովորի տարբերել մեքենան նրա կապիտալիստական գործադրությունից և դրա հետ միաժամանակ իր հարձակումները արտադրության նյութական միջոցներից փոխադրի նրանց շահագործման հասարակական ձևի վրա»:

Հետո, արդյունաբերական կապիտալիզմի արշալույսին բանվորների քաղաքական յեղությունները, շնորհիվ պրոլետարիատի համեմատաբար փոքրածված լինելուն, անկազմակերպություն և անբավարար գիտակցություն, նույնպես պարտություն կրեցին: Այն ժամանակ սկսվեց արդունաբերություն վերելքի շրջանը և աշխատանքի լավագույն պայմանների համար բանվորների մղած տնտեսական պայքարի ծավալումը: Յեվ վորովհետև աշխատանքի պայմանները, — աշխատավարձի բարձրության աստիճանը, բանվորական որվա տեղությունը և այլն, — զանազան արհեստների (պրոֆեսիաների) աշխատավորների համար տարբեր են լինում, ուստի և այդ պայմանների բարելավման համար մղված պայքարի հաջողության համար անհրաժեշտ է, տարբեր արտադրությունների միասնական միության փոխարեն, կազմակերպել միություններ ըստ առանձին արհեստների (դերձնակների, կոշակարների, գլխարկակարների, դարբինների և այլն): «Ենթակական պայքար, — գրում էր Լենինը, — բանվորների կոլեկտիվ կոնֆի և տերերի դեմ՝ իրենց բանվորական ույժն ավելի ձեռնտու պայմաններով ծախելու, աշխատանքի և կյանքի պայմանները լավացնելու համար: Այդ կոնֆի ըստ անհրաժեշտության արհեստակցական է, վորովհետև աշխատանքի պայմանները տարբեր

արհեստներում չափազանց բազմազան են, և հետևաբար այդ պայմանները լավացնելու համար մղված կոնֆի չի կարող չմղվել ըստ արհեստների»¹⁾

Այսպիսով, ժամանակակից արհեստակցական միությունները բնավ վարպետացուների միությունների անմիջական հաջորդները չեն, նրանք աստիճանաբար վերջիններից չեն ծագել, այլ առաջացել են իբրև վարձու բանվորների միացման մի ետև, վոր միայն ձեվակացու, արտաքինով նման է վարպետացուների միությանը:

«ՄԻԱՍՆԱԿԱՆ ԻՐՉԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Արհեստավորական-համաքարային միությունների կործանման և արհեստակցական-արտադրական միությունների ստեղծման միջև ընկած ժամանակամիջոցում փորձեր էին լինում կազմակերպելու բանվորներին, նրանց ընդհանուր (բոլոր արհեստների համար) կարիքներն հիմք ընդունելով:

Անգլիայում, 1829 թվից մինչև 1842 թ. գոյություն է ունենում Ռոբերտ Ուոլենի կազմակերպած ունիվերսալ (ընդհանուր) բանվորական միավորումը «Արտադրությունների կոնսոլիդացիոն Ազգային Մեծ Միություն» անունով: Նա հենց զուգահեռում է չարտիզմի²⁾ շրջանին, վոր Ենգելը պատկերացնում է իբրև «մի միացայլ ընդամարդության ձև, ուղղված բուրժուազիայի դեմ»: «Արհեստակցական միություններում և գործադուլներում, — ասում է նա, — (Բանվոր դասակարգի դրությունն Անգլիայում), — ուպրոգիցիան միշտ էլ յերևան է յեկել ցաք ու ցըրիվ ձևով. առանձին բանվորների սեկցիաները կոլում էին առանձին բուրժուաների դեմ: Իսկ յերբ վոր կոնֆի ստացել և ընդհանուր բանվորություն, ապա «այդ տեսակ ընդհանուր շարժման հիմքն էր չարտիզմը»: Այն չափով, ինչ չափով Ուոլենի միավորության մեջ յերևան են գալիս բոլոր բանվորների ընդհանուր պահանջները, նրանք զուգահեռում են քաղաքական շարժման՝ հյուսվելով միմիանց հետ: Չարտիզմի անկումից հետո սկսվում է տրեդ-յունիոնիզմի, ըստ արհեստների կազմակերպության դարաշրջանը:

¹⁾ Ленин: „Что делать,“ т V.

²⁾ Մասսայական հեղափոխական շարժում Անգլիայում, վոր միացած էր այն պահանջների շուրջը, վոր մի հանրագրի (պետիցիա) մեջ անվանված է «չարտերեն»:

Նույն պրոցեսը նկատվում է և Գերմանիայում, վորտեղ մենք հանդիպում ենք Շվեյցերի կազմակերպած ընդհանրական (ուճիվերսալ) միավորությանը «Գեվերկշաֆտսբունդ» անվան տակ:

1863 թ. նա Բերլինում հրավիրել էր կոնգրես, նպատակ ունենալով հիմնել տարբեր արհեստներից կազմված ընդհանուր բանվորական միություն: Հրավիրման կոչի մեջ նա իր նպատակն այսպես էր ձևակերպել. «Գերմանիայի բոլոր բանվոր մարդկանց համարնապարփակ, հաստատուն կազմակերպություն, վոր ձուլվել է միայն իր միջոցով և միայն իր մեջ հանուն ընդհանուր առաջադիմության՝ գործազուլների ճանապարհով» Ունիվերսալ միավորության հենց այս շրջանում գերմանացի տընտեսագետ Ջոմբարտը մատնանշում է մի նշանակալից յերևույթ, այն, վոր «յուրաքանչյուր մանր միություն, վոր յերբեմն բաղկացած էր լինում միայն վարչությունից առանց անդամների», իրեն անվանում էր «այս ինչ քաղաքի միջազգային արհեստակցական ընկերություն»: Ըստ յերևույթի զրանով էր արտահայտվում ձգտումը դեպի ունիվերսալ միավորությունը, իբրև հակազդույուն վարպետացուների նեղ համքարային միությունների: Իսկ «ուճիվերսալիզմի» անկումից հետո Գերմանիայում հաստատվում, ամրանում են ներկայիս գեվերկշաֆտսները (արտադրական միությունները):

Ամերիկայում էլ ժամանակակից միությունների յերևան գալուց առաջ կար ազգային բանվորական միություն, մի ունիվերսալ կազմակերպություն, վոր հետո դառավ արհեստակցական:

Մեզ մոտ, Ռուսաստանում, «Հյուսիսային ռուսական բանվորական միությունից» հետո, վորը չարտիզմի նման պարտություն կրեց, յերևում են ժամանակակից արհեստակցական շարժման սաղմերը, նախ 90-ական թվականների մանր, համքարային միավորումները, իսկ հետո, 1905 թ. հեղափոխությունից հետո՝ ժամանակակից տիպի արհեստակցական միությունները:

Ընդհանուր դրությունը, վոր մենք սահմանում ենք, այսպես է, ժամանակակից արհեստակցական շարժումն ամբողջ աշխարհում չի աճել վարպետացուների միություններից եվոլյուցիոն (աստիճանական) ճանապարհով, այլ նախ կոորդինով, բայց բայով է վարպետացուների միությունը, նեղ համքարային մի-

յավորումը փոխարինվել է ընդհանրականով (ուճիվերսալ), յեվ հետո միայն յերեվում է արհեստակցական միությունը:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԸ

Անգլիայում, ուր ամենից շուտ զարգացավ արդյունաբերական կապիտալիզմը, ամենից շուտ էլ ծնունդ առավ արհեստակցական շարժումը: Յեվ հետագայում, ամեն մի յերկրում, ուր յերևում է կապիտալիստական արդյունաբերությունը, նրան հետևում է և արհեստակցական միությունների կազմակերպումը: «Միություններն,—ասում է Մարքսը,—միշտ էլ աճել ու զարգացել են ժամանակակից արդյունաբերության զարգացման և աճման հետ միասին» («Низета философии»):

Ենդեւսը «Բանվոր դասակարգի դրությունն Անգլիայում» գրքի մեջ այսպես է նկարագրում անգլիական արհեստակցական շարժման առաջին քայլերը. «Աշխատանքի բոլոր ճյուղերում կազմակերպվեցին տրեդ-յունիոններ (այսպես են կոչվում Անգլիայում արհեստակցական միությունները), վոր բացարձակ կերպով ձգտում էին պաշտպանել առանձին բանվորին բուրժուազիայի բռնակալությունից և անարդարությունից, նրանց նպատակն էր. վորոշել աշխատավարձը, բանակցել աշխատանք տվողների հետ, իբրև մի ուժ, վոր հանդես է գալիս միության բոլոր անդամների անունից աշխատավարձի կանոնավորման հարցերում և աշխատանք տվողի շահին համապատասխան՝ հարմար դեպքում բարձրացնելու աշխատավարձը, աշխատանքի բոլոր ճյուղերում, բոլոր գործարաններում աշխատավարձը նպահանել միևնույն բարձրության վրա:

«Այդ պատճառով էլ նրանք սովորաբար բանակցում էին կապիտալիստների հետ բոլորի համար աշխատավարձի պարտադիր նորմա հաստատելու նպատակով, իսկ յեթե կապիտալիստներից մեկն ու մեկը հրաժարվում էր այդ նորման ընդունել, նրանք գործադուլ էին հայտարարում: Հետո սահմանափակելով աշակերտների ընդունելության թիվը, նրանք աշխատում էին պահպանել այդ բանվորների համար յեղած պահանջը, և զրանով աշխատավարձը վորոշ բարձրության վրա պահել, ձգտում էին հակադդել գործարանատերերին, յերբ նրանք փորձում էին նոր մեքենաներ և գործիքներ մացնելով իջեցնել աշխատավարձը և վերջապես գործազուլներին դրամական ոժանդակություն էլ չույց տալիս»:

Զանազան յերկրներում, համապատասխան նրանց տնտեսական և քաղաքական պայմաններին, կազմակերպվում էին արհեստակցական միություններ և իրենց աշխատանքները տանում տարբեր յեղանակներով:

Անգլիայում մինչև վերջին ժամանակներս նեղ արհեստակցական միությունները (տրեդ-յունիոնները) չեն միացված մի կենտրոնում, մինչև որս չունեն վոչ ընդհանուր կազմակերպչական պլան, վոչ գործողության ընդհանուր ծրագիր և իրենց պայքարի ընթացքում չափազանց մեծ հույսեր են տածում դեպի դեմոկրատիկ պարլամենտի որոնողական ռեֆորմները:

Դա պատմականորեն բացատրվում է նրանով, վոր Անգլիան հնուց իշխում է միջազգային շուկայում, նրա «ազատությունների խարտիան» (սահմանադրությունը) 700 տարուց առավել անցյալ ունի, ամենահարուստ գաղութները շահագործումը նրա բուրժուազիային հնարավորություն է տալիս նետելու բանվորներին առաջ իր առատ սեղանից ավելորդ փշրանքներ: Այս բոլորը նպաստում էր, վոր աշխատավորների ուղեղում ամրանար, մեխվեր պարլամենտական իրավագիտակցություն և ստեղծվեր բանվորական արհեստակրատիա, վոր իր վոգով ոտար է հեղափոխական պայքարին:

Ֆրանսիական արհեստակցական միություններն (սինդիկատները) միացած են Աշխատանքի Ընդհանուր կոնֆեդերացիայում (1921 թ. նրանցից անջատվեց անդամների մեծ մասը և կազմեց Աշխատանքի Կարմիր Ունիտար ֆեդերացիա) և մերժում են պարլամենտական պայքարը, միակ ճիշտ միջոց համարելով «ուղղակի գործողությունը», այսինքն ընդհանուր գործադուլը (սաբոտաժն ուղղակի գործողության մեջ մինչև 1910—12 թ. ֆրանսիայում գործադուլում էր մեքենաներ ջարդելու, կաթսաներ պայթեցնելու և այլն իմաստով):

Ֆրանսիական արհեստակցական միությունների այդ առանձնահատկությունները բացատրվում են նրանով, վոր արդյունաբերական կապիտալիզմը Ֆրանսիայում համեմատաբար քիչ է զարգացած: Այնտեղ տիրապետում է ֆինանսական կապիտալը, քաղաքական պայքարը վաղուց սուր կերպարանք է և ստացել, իսկ բանվորական ապստամբությունների անհաջողությունները, վոր ճնշվում էին հանրապետական բուրժուազիայի կողմից, պրոլետարիատի տչքում վերջնականապես վարկաբեկեցին դեպի պարլամենտն ու դեմոկրատիան յեղած հավատը:

Մյուս կողմից, ֆրանսիական սոցիալիստ-համաձայնականները նույնպես նպաստեցին այն բանին, վոր ֆրանսիական բանվորների մեջ ուժեղացավ բացասական վերաբերմունքը դեպի քաղաքական պարլամենտական պայքարը: Դեռ սրանից 20 տարի առաջ «սոցիալիստ Միկերանը» (ֆրանսիական հանրապետության նախկին նախագահ) մտնելով իբրև մինիստր Վալդեկ-Ռուսսոյի բուրժուական կաբինետը, մասնակցեց գործադուլավորներին արյունով ճնշելու գործին: Յեղ նրա բարեկամները պարլամենտում քաջալերեցին այդ դավաճանությանը:

«Սոցիալիստների» նման վարմունքը, ինչպես արդարացի կերպով նկատում էր Պլեխանովը («Несра» № 76), պետք էր վոր բացասական վերաբերմունք ստեղծեր ֆրանսիական պրոլետարիատի շարքերում:

Գերմանիայում արհեստակցական միությունները (գեվերքշաֆտները), վոր ավելի կանոնավոր են կազմակերպված և կենտրոնացրած, գործադուլը կապակցում էին պարլամենտական պայքարի հետ:

Դրան նպաստում էր այն հանգամանքը, վոր Գերմանիայի պետական միացումն ընթանում էր ընդհանուր ընտրական իրավունք մտցնելուն զուգընթաց. իսկ դրանից հետո սկսված արդյունաբերության արագ աճումը կենտրոնացրեց բանվորների հսկայական մասսաներ և մղեց նրանց դաժան շահագործման դեմ համառ կռիվ: Այդ խիստ շահագործումն առաջանում էր գերմանական յերիտասարդ արդյունաբերության և ավելի հին կապիտալիստական յերկրների մեջ ծագած մրցման պայմաններից:

Ամերիկական տրեդ-յունիոնները դեպի պարլամենտն ունեցած հավատի և իրավարարության (арбитраж) գործադրման հետ միասին, մերժելով բացարձակ «ուղղակի գործողությունը», պայթեցնում էին մեքենաները, գործարանները և այլն:

Այստեղ մենք տեսնում ենք մեկ կողմից կենտրոնացրած համքարային միություն, կարծես թե «տրեստի վերածած տրեդ-յունիոն» չափավոր քաղաքական ուղղությամբ, մյուս կողմից «աշխարհիս արդյունաբերական (ինդուստրիալ) աշխատավորների» հեղափոխական միությունը, վոր կառուցված են միասնական միության սկզբունքով:

Սա նրանով է բացատրվում, վոր Ամերիկայի հոսսարակական-տնտեսական միջավայրը խառնուրդ է անգլիական «բաքե-

«Կեցութեան» և կենտրոնացրած «յերկաթյա կրունկի», բուրժուական դեմոկրատիայի իսկական եյության ցինիկ մերկացումով հանդերձ:

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Մակայն, պայքարի կազմակերպչական ձևերի և մեթոդների (յեղանակների) ներկայիս ամբողջ բազմազանությամբ հանդերձ ամեն ևեղ, ուր առաջ եյին գալիս արհեստակցական միություններ, նրանց ամենասկզբնական նպատակն իր անգամների նյութական գոյության բարելավումն է յեղել (գոյություն ունեցող իրավակարգի սահմաններում):

Կապիտալիստական հասարակութեան մեջ բանվորը կրկնակի յե շահագործվում: Արտադրութեան մեջ նրա ջիւերն են քաշում գործարանատերերը, իսկ յերբ նա գնում է սպառման անհրաժեշտ առարկաներ առնելու, նրա կաշին քերթում են վաճառողները: «Սպառողական» շահագործումից պաշտպանվելու համար բանվորները կառուցում եյին կոոպերատիվ կազմակերպություններ, վորոնց հիմնական նպատակն երե՛ծանացնել կենսական անհրաժեշտ առարկաները և գործադուլների ժամանակ պարեն մատակարարելու հնարավորութեանն ապահովել: Իսկ արհեստակցական միությունները ստեղծվում եյին պաշտպանելու համար բանվորի շահերն իբրև արտադրողի:

Իրենց անդամների դրությունը բարելավելու համար արհեստակցական միություններն ինչ միջոցներ եյին գործադրում:

Մենք վերևում տեսանք Ենգելսի նկարագրությունից, վոր արդեն առաջին արհեստակցական միությունները զբաղվում եյին տարիֆային համաձայնություններով, կազմակերպում եյին գործադուլներ և գործադուրկներին ոժանդակութուն ցույց տալիս: Միություններն սկսեցին իրենց անդամների հիվանդութեան դեպքում ցույց տալ բժշկական ոգնություն, ծննդաբերութեան և թաղման ժամանակ նպաստ եյին տալիս, կազմակերպում եյին աշխատանք գտնելու բյուրո, տալիս եյին իրավաբանական խորհուրդներ, կազմակերպում եյին հաշտարար կամեքաներ և միջնորդ դատարաններ, բոյկոտ եյին հայտարարում այն ձեռնարկուներին, վորոնք զանց եյին առնում միությունը, առանց հարգելի պատճառների արձակում եյին բանվորներին, և նրանց փոխարինում եյին միութեան վոչ անդամներով և այլն:

Այդ բոլորն ի հարկե արվում եր նրա համար, վորպեսզի բանվորների լայն մասսաները գրավեն միութենական կազմակերպությունների մեջ, Վորովհետև արհեստակցական միութեան հիմնական նպատակը բանվորներին միաձուլելը և նրանց միջից ներքին խռովությունների վոչնչացնելն է: «Վարձու աշխատանքը»,—ասվում է «Կոմունիստական Մանիֆեստում».—հիմնվում է բացառապես բանվորների միջև յեղած մրցութեան վրա: Ուստի և վարձու աշխատանքի դրութեան բարելավումն անհնար է առանց բանվորների միջև յեղած ներքին մրցութեան թուլացման: «Նոր արդյունաբերությունը»,—գրում եր Մարքսը «Нп-щета философии» գրքում,—ի մի յե հավաքում միմիանց անծանոթ բազմաթիվ մարդիկ: Մրցությունը նրանց բաժանում է: Բայց աշխատավարձը նվազելուց պաշտպանելը,—այդ նրանց համար ընդհանուր և տերերի համար հակառակ շահը,—միացնում է բանվորներին դիմադրութեան կազմակերպելու մտքով՝ կուլիցիայի գաղափարով*): Այսպիսով կուլիցիան ունի կրկնակի նշանակություն՝ դադարեցնել բանվորների միջև յեղած կոնկուրենցիան, վորպեսզի հնարավոր լինի ընդհանուր ույժերով մրցել (կուլի) կապիտալիստների հետ»:

Բայց դրա համար անհրաժեշտ է, վոր վորքան կարելի յե տվյալ արհեստի շատ բանվորներ միացած լինեն համապատասխան արհմիութեան մեջ:

Միայն այդ դեպքում կարցելի յե չվախենալ միությունից դուրս մնացած բանվորների մրցումից, վորոնք սովորաբար իրենց ցրված, անդիսցիպլին գործողություններով իջեցնում են աշխատավարձը և խանգարում միութեանը, աշխատանքի պայմանների ընդհանուր բարելավման համար նրա վարած աշխատանքի ընթացքում: Յե՛վ միայն այս դեպքում կապիտալիստն ստիպված կլինի հաշվի առնել արհեստակցական միությունը, իբրև մի իրական ույժի, վոր հանդես է գալիս իբրև տվյալ արհեստի բոլոր բանվորների շահերի պաշտպան:

Իսկ ինչ միջոցով հնարավոր է վորքան կարելի յե շատ թվով բանվորներ գրավել միութեան մեջ,

Ամենահոստալի միջոցը, վորը փորձել եյին դեռ ևս վարպետացուները, համարվում եր փոխադարձ ոգնությունը: Մանա-

*) Այսինքն՝ միություն: Իտալիայում արհեստակցական միություններն այդպես ել կոչվում են. «դիմադրութեան սինդիկատներ»: Ս. Գ.

վանդ մեծ ծավալով դա գործադրում եյին մինչև վերջին ժամանակներս անգլիական տրեդ-յունիոնները: Որինակ 1911 թվին Անգլիայի 100 ամենախոշոր արհեստակցական միությունները, վոր ընդգրկում էյին բոլոր կազմակերպված բանվորների կեսը, փոխադարձ ոգնության վրա ծախսել են իրենց տարեկան յեկամատի համարյա 60⁰/₀-ը: Նույն տարում Գերմանիայում միությունների բոլոր ծախսերի ¹/₃-ը գնացել է անդամներին տրված նպաստների վրա: Այստեղ միավորման ոգուտն այնքան տեսանելի չէ, վոր այդ կարող է հասկանալ նույնիսկ ամենաանգիտակից բանվորը:

Բայց նպաստներ տալու, բժշկական և իրավաբանական ոգնություն ցույց տալու և գործադուրկներին ոժանդակելու համար և այլն հարկավոր են միջոցներ: Իսկ վորպեսզի բանվորը կարողանա կանոնավորապես իր վճարները մուծել միությունական գանձարկղը, նա պետք է իր ապրուստի համար անհրաժեշտ միջոցներեց բացի թեկուզ մի փոքր ավելցուկ ունենա: Այն ինչ գործարանատերերը միշտ ձգտում են աշխատավարձն իջեցնել մինչև սոված նվազագույնը: Յեթե բանվորն աշխատում է, գործադուրկների թիվը մեծանում է կարիքն աճում, ապա և միութեանական գանձարկղը դատարկվում է: Ստացվում է մի կախարդական շրջան:

Սպառողական կոոպերացիայի ասպարիզումն էլ գործն անհուսալի դրության մեջ էր: Վորովհետև աշխատավարձի ամենացածր սահմանը նվազագույն բանակով այն առարկաների արժեքն է, վոր անհրաժեշտ է բանվորին իր և իր ընտանիքի գոյությունը պահպանելու համար, ուստի և մթերքների ամեն անցածվա եփանացման հետ միասին կապիտալիստները ձգտում էյին համապատասխանորեն իջեցնել և գնահատումները (աշխատավարձը), այսինքն փաստորեն իրենց գրպանը դնել բանվորական կոոպերացիայի ամբողջ ոգուտը: Վորպեսզի այդ բանը խանգարել, նորից հարկավոր էյին ուժեղ արհեստակցական միություններ, վորոնք կարողանային աշխատավարձը պահպանել իջնելուց և այդպիսով հնարավորություն տալ բանվորներին իր պահանջների և բարեկեցության մակարդակը բարձրացնելու համար ոգտվել կոոպերատիվ ուպերացիաների արդյունքներից:

Այսպիսով, արհեստակցական միության և կոոպերատիվ անդամ բանվորը, այն գիտակցության է գալիս, թե իր նյութական դրությունը բարելավելու համար ամեն մի նպատակից և ե-

ժանացումից ավելի կարևոր է իր աշխատանքի պայմանների բարելավումը: Բայց բուրժույզ ինքնակամ զիջումներ չի անի: «Բարեսրտությամբ» գործարանատերը յերբեք աշխատավարձը չի բարձրացնի, աշխատանքի որվա տևողությունը չի կրճատի, տուգանքները չի վերացնի: Ամեն անգամ պետք է նրա կոկորդից բռնել: Ինչքան էլ վոր ծանր և վտանգավոր լինի, բայց և այնպես պետք է գործադուրկ անել, պետք է ակտիվ կերպով կռվել:

Հաջող գործադուրկ միշտ էլ իրեն կարգարացնի և արագ կերպով կը վերականգնի միությունական գործերը: Գերմանիայում 1910 թվին գեվերկլաֆտները (միությունները) գործադուրկների վրա ծախսեցին 9 միլլիոն նախապատերազմյան ուլբլի. դրա դիմաց մոտ մեկ միլլիոն գործադուրկավոր բանվորներ բարձրացրին իրենց աշխատավարձը ընդհանուր առմամբ ավելի, քան 40 միլլիոն ուլբլով:

Բայց գործադուրկի հաջողության համար նախ և առաջ անհրաժեշտ է դիմացկանություն, միաձուլություն և գիտակցականություն: Հարկավոր է, վոր յուրաքանչյուր պրոլետար դգա, վոր ինքը արյունակցական կապով կապով կապված է ամբողջ բանվոր դասակարգի հետ, զգա, վոր մեկն ամենքի համար է, ամենքը մեկի: Քանի քանի անգամ կռիվն անհաջողությամբ է վերջացել, շնորհիվ այն բանի, վոր միություն, մի սիրտ, մի հոգի կազմելու գիտակցություն չի յեղել, վոր բանվոր դասակարգի միջից դուրս են յեկել դավաճաններ՝ շտրեյկբրեխերներ (քոստներ), ինչպես անվանում են Անգլիայում), վոր քանդում են գործադուրկը: Ֆրանսիայում 40ական թվականներին կային բանվորների ամբողջ խմբեր, վոր ման էյին գալիս գեղից բլուզներով և պատրաստ էյին գործարանատերերի հենց առաջին կոչով փոխարինելու գործադուրկավոր ընկերներին: Այդ որվանից շտրեյկբրեխերներին և բանվորական գործին դավաճանողներին անվանում են «գեղին»: Մինչև այժմս էլ բոլոր բուրժուական յերկրներում դեռ ևս կան բավականաչափ տգետ, անգիտակից բանվորներ, վորոնք իրենց գեղին առաջնորդների ցուցմունքներով խանգարում են առաջավոր պրոլետարիատի տնտեսական և քաղաքական պայքարը:

Շատ ճիշտ կերպով գերմանական մարսելյոզում յերգվում է թե՛ «Մեր ամենատեղի թշնամին, վոր խիտ շարքերով ճնշում է մեզ ամեն կողմից, — անգիտակից բանվորական մասսան էր

Այս հանգամանքից արհմիության առաջ ծառանում ե մի քրացուցիչ խնդիր՝ բարձրացնել իր աճգամներին կուլուրտական մեկնարկալը, Անհրաժեշտ ե բանվորին դաստիարակել դասակարգային համերաշխության վրա, ընտելացնել նրան հասարակական կյանքին, լուսավորել նրա միտքը, նրան մեջ դարձնեցնել պայծառ մտքեր պրոլետարիատի պատմական դերի մասին, կռել ու կռիվել պայքարին և հաղթանակի համար հզոր կամք:

Սակայն այս բոլորն ասելը հեշտ ե, իսկ իրագործելը: Բուրժուական պետությունը, վոր ըստ եյուլթյան կապիտալիստների դասակարգի միացիալ կազմակերպությունն ե, «բուրժուազիայի գործերը վարելու համար կոմիտե», — շատ քիչ ե հակված լուսավորելու բանվորական մասսաները: Ընդհակառակը, նույնիսկ ամենադեմոկրատիկ հանրապետությունները — դպրոցների, յեկեղեցու, թատրոնի, մամուլի միջոցով — սխտեմատիկ կերպով թունալորում են աշխատավորների գիտակցությունը ամեն տեսակ հիմար և վնասակար նախապաշարմունքներով: Ի՞նչ են անելու արհեստակցական միությունները, Հարկավոր են բանվորական աղումներ, բանվորական համալսարաններ, բանվորական թերթեր, պարբերականներ, դասագրքեր, իսկ միջոցներ վճարողից ձեռք բերել: Նորից ճակատագրական մի հարց: «Հալալ քրտինքով քարե պալատներ չես շինի» Անդամավճարով — աղքատիկ աշխատավարձից հատկացրած կոպեկներով, — աշխատանքի պալատներ, պրոլետարական գիտություն և արվեստի տաճարներ չեն կառուցի:

Վերջապես, կապիտալիստական յերկրներում արհմիությունների նույնիսկ ավել կամ պակաս չափով հաջող գործունեությունը չի կարող ապահովել նրանց մասնակի հաջողությունների համար կայուն զրույթությունը:

Ընդհանրապես «միությունների բոլոր ջանքերը, — գրում եր Ենգելսը, — չի կարող փոխել այն տնտեսական որենքը, ըստ վորի աշխատավարձը վորոշվում ե բանվորական շուկայում յեղած պահանջի և առաջարկի փոխհարաբերությունով» Կապիտալիստական հասարակության մեջ այս հանգամանքն ինքն ըստ ինքյան նշանավոր չափով նեղացնում ե արեստակցական միությունների նշանակության սահմանները: Բացի դրանից, յեթե բանվորները մի վորեն ձեռնարկության մեջ հաջող գործադուլով ձեռք բերեցին, որինակ, կրճատված բանվորական որ, ապա անհրաժեշտ ե այդ տարածել նաև բոլոր ձեռնարկությունների վրա՝ գոնե ար-

դյունաբերության տվյալ ճյուղի ձեռնարկությունների վրա: Այլ կերպ գործարանատերը, վոր ստիպված այդ զիջումն արել ե, չի կարող մրցել մյուս գործարանատերերի դեմ, և կամ կը փակի իր ձեռնարկությունը, կամ հարմար առիթին հետ կվերցնի իր զիջումը: Վորպեսզի ձեռք բերած նվաճումը քիչ թե շատ ամուր հիմքերի վրա դրվի, բանվորները պետք ե աշխատեն այդ հաստատել տալ որենսդրական ճանապարհով: Բայց կապիտալիստական պետություններում որենսդիրները (որենք զնորդները) նույն բուրժուայներն են, վոր նստած են միևնույն թյուններում, դեպարտամենտներում, պարլամենտներում: Միթե նրանք հոժար կամքով կխախտեն կապիտալիստների շահերը և բանվորների համար ոգտակար որենքներ կհրատարակեն: Ի հարկե վոր: Այսպես կոչված բանվորական որենսդրության պատմությունը անհերքելի կերպով ապացուցում ե, վոր բուրժուական, կառավարությունը, աշխատանքի պաշտպանության վերաբերյալ նույնիսկ ամենապակասավոր որենքներն հրատարակվել են շահագործողների վճռական, կատաղի կովի ազդեցության տակ:

Այսպիսով, վոր կողմից ել հարցին մոտենանք, միմիայն գործնական-տնտեսական գործունեությունը բավականանալ չի կարելի: Արհեստակցական միություններն ստիպված են միաժամանակ յերկու ֆրոնտի վրա կռվել: 1) անմիջապես շահագործող-կապիտալիստների դեմ և 2) բուրժուական պետական իշխանության դեմ, վոր կապիտալիստների դասակարգային տիրապետության որպանն ե: Բայց պետական իշխանության դեմ վարած ամեն մի կռիվ բաղափակե կռիվ ե, վորը մղում ե մի հատուկ կազմակերպություն, վոր կուսակցությունն ե կոչվում:

Իսկ ի՞նչ դեր են խաղում արհեստակցական միությունները և ի՞նչ տարբերություն կա միության և կուսակցության մեջ: ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՈՒՆՆԵՐ ՈՒ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ իրեն խնդիրների կուսակցությունն ավելի լայն կազմակերպություն ե, քան արհեստակցական միությունը, վորովհետև նա պաշտպանում ե դասակարգի բոլոր շահերը՝ և, տրեստեսական, և՛ քաղաքական, և մտավոր: Սակայն իրեն կազմով կուսակցությունն ավելի նեղ ե արհեստակցական միությունից: Լեզալ կերպով, այսինքն բուրժուական կուսակցության թյուլաովությունը աշխատող արհեստակցական միության մեջ մտնում են նույնիսկ կիսագիտակից, դեռ ևս շատ նախապաշարմունքներ:

քից չազատված բանվորները, միայն իրենց նյութական գրու-
թյունը լավացնելու համար, իսկ իրական բանվորական կու-
սակցությունն իր շարքերի մեջ ընդունում ե միայն դասակար-
գի լավագույն ներկայացուցիչներին՝ գիտակից, համոզված, անձ-
նագու՜ մարտիկներին, վորոնք վոչ միայն մոռակա, ամենորյա
կարիքներն են հասկանում, այլ և ըմբռնում են պրոլետարական
ազատագրական շարժման վերջնական նպատակները։ Այսպիսով
կուսակցությունը դասակարգի ուղիղն է, նրա ամենազարգացած,
մտածող մասը։ Կուսակցության և արհեստակցական կազմակեր-
պության մեջ կանա մի էական տարբերություն։ Կուսակցությու-
նը պաշտպանում ե ամբողջ դասակարգի շահերը և վոչ թե մե-
նակ կազմակերպության անդամների։ Իսկ արհեստակցական մի-
ությունները, կոոպերատիվները պես, միշտ ել տարբերություն
են դնում իրենց անդամների և վոչ անդամների միջև։ Միության
անդամներին տրվում ե ամեն անհակ առավելություններ՝ միայն
նրանց ե նպաստ տրվում, նրանց համար ե առավելություններ
նախատեսվում հավաքական պայմանագրերում և այլն։ Միշտ
և ամեն տեղ այդպես ե յեղել՝ Անգլիայում, Ֆրանսիայում Գեր-
մանիայում՝ այդպես և Ամերիկայում։ Զբոսնախաղում երբ այդ առթիվ
դանդաղներ լսելու, վոր դա ինչ կամավոր անդամագրություն
ե, յերբ գործն այնպիսի պայմանների մեջ են դնում, վոր կամա-
տկամ կանդամագրվես միությանը, հակառակ դեպքում վոչ մի
արտոնություն չես ստանա։ Բայց պարզ ե, վոր այդպես տալով
են նրանք, վորոնք չեն հասկանում, թե ինչ ե արհեստակցական
միությունը։ Մենք արդեն տեսանք, վոր արհեստակցական միու-
թյան ամենագլխավոր գործը փոխոգնությունն եր։ Միության
անդամները վորոշ պարտականություններ են կատարում՝ մտածում
են անդամավճարներ, փողոջներ յեն հաճախում, վարչություն
են ընտրում, հանձնաժողովների մեջ են աշխատում, կառուցում
և պահպանում են կազմակերպությունը։ Իսկ ով պարտականու-
թյուններ ե կատարում, պետք ե և արոճնյալ իրավունքներ ու-
նենա։ Այդ պատճառով ել արդարացի յե, յերբ արհեստակցական
միությունները իրենց անդամներին նախապատվություն են տա-
լիս նրանց առաջ, ովքեր ընդհանուր գործի համար մատը մա-
տին չեն խփում և միշտ սպասում են, վոր իրենց համար ուրիշ-
ներն աշխատեն և իրենց պատրաստի տան ամեն տեսակ բա-
քիքներ։

Իսկ հավաքական պայմանագրերը։ Չե վոր դա յուր տեսա-

վի մի փոխադարձ յերաշխիք ե։ Միությունը, վոր հավաքական
պայմանագիր ե կնքում, բանվորների կողմից պարտավորվում
ե, վոր նրանք բարեխղճորեն կը կատարեն այդ պայմանագրի
կետերը։ Բայց լավ ե, յերբ յերաշխավորություն ես տալիս միու-
թյան տյն անդամի փոխարեն, վորը դաստիարակված ե ընկե-
րական դիսցիպլինայի վորով։ Իսկ յեթե մեկն ու մեկը միու-
թյան մեջ մտնել չի ցանկանում, ավելի լավ ե համարում մնալ
«վայրենի» (արտասանմանում այդպես են անվանում այնմարդ-
կանց, վորոնք կազմակերպության մեջ չեն մտնում), վորպեսզի
չյենթարկվեն խելացի կոլեկտիվ կամքին, — հազա թնչ յերաշ-
խիք կա, վոր նա ազնվաբար կը կատարի միության կնքած
պայմանագրի բոլոր կետերը։ Ավելի շուտ հակառակը պիտի
սպասել, «վայրենուց» միշտ ել կարելի յե սպասել դավաճանու-
թյուն, խաբեբայություն և շտրեյկերիսերություն։ Պարզ ե, վոր
միությունը հավաքական պայմանագրի մեջ մտցնելու յե մի կետ,
վորով պահանջելու յե, վորպեսզի տվյալ ձեռնարկության մեջ
աշխատանքն առանջին հերթին տրվի միության անդամ կազմա-
կերպված բանվորներին։

Վերջապես, հեղափոխական բանվորական կուսակցությունը
չի սահմանափակվում շահագործման մեջ մեղմացումով, կանգ չի
առնում աշխատանքի պայմանների մասնակի բարելավումների
վրա, այլ ձգտում ե արմատից վոչնչացնել ամեն մի շահագոր-
ծում։ Կուսակցությունը, — գրում ե Լենինը («Ինչ անել» բրո-
շյուրում), — դեկավրում ե բանվոր դասակարգի կոիվը վոչ մի-
այն բանվորական ույժի վճառման ձեռնտու պայմանների հա-
մար, այլ և վոչնչացնելու համար այն հասարակաբքը, վոր
ստիպում ե չքավորներին ծախվելու հարուստներին։ Նա իրենից
ներկայացնում ե բանվոր դասակարգը վոչ թե դեպի ձեռնադ-
րուների տվյալ խմբակն ունեցած վերաբերմունքով այլ՝ դեպի
ժամանակակից հասարակության բոլոր դասակարգերը, դեպի
պետություն, իբրեւ մի կազմակերպված քաղաքական ույժի, ու-
նեցած վերաբերմունքով։

Զգտելով բուրժուական կառավարություններից ռեֆորմներ
այսինքն մասնակի բարելավումներ, ստանալ, բանվոր դասա-
կարգի հեղափոխական կուսակցությունը ռեֆորմների համար
մղած այդ պայքարը յենթարկում ե, իբրեւ մասն ամբողջին,
ազատության և սոցիալիզմի համար մղված հեղափոխական պայ-
քարին, (բրոշյուրը գրված ե 1902 թ.)։ Իսկ դա նշտնակում ե՝

տապալել կապիտալի տնտեսական և քաղաքական տիրապետութիւնը և ստեղծել նոր հասարակարգ, վորի ժամանակ գործարանները, մեքենաները, հողը հանքերը, անտառները, — մի խոսքով արտադրութեան բոլոր միջոցներն ու գործիքները կը դառնան իրենց աշխատավորների հասարակական սեփականութիւնը:

Ուստի և արհեստակցական միութիւններն այն գիտակից անդամները, վորոնք բազմակողմանիորեն ըմբռնում են իրենց պրոլետարական շահերը, ձգտելով բարեկամել իրենց նյութական դրութիւնը, միաժամանակ ամեն կերպ ոժանդակելու յին այն քաղաքական կուսակցութեանը, վորը ղեկավարում է պրոլետարիատի ամբողջ պայքարը՝ վերջնական ազատագրութեան համար:

Դժբախտաբար, արտասահմանում շատ միութիւններ շատ թույլ կերպով են յուրացրել այդ ակնբախ ճշմարտութիւնը:

Այն հանգամանքը, վոր այնտեղի միութիւնները ծագել և զարգացել են քաղաքական կյանքի ավելի կամ պակաս ազատ պայմաններում, նրանց այն միտքն է ներշնչել, վոր իբրև թե աստիճանաբար, խաղաղ-կերպով, մասնակի ռեֆորմների (բարելավումների) ճանապարհով հնարավոր է բանվորների համար ձեռք բերել բարեկեցիկ ու յերջանիկ կյանք: Անգլիական տրեդ-յունիոններն ստեղծեցին չափավոր բանվորական կուսակցութիւն, վորն աշխատում է, իհարկե, անհաջող կերպով, պարլամենտի ոգնութեամբ լուծել աշխատանքի և կապիտալի շահերի անլուծելի հակասութիւնները: Գերմանական զեվերկշաֆտների մեծամասնութիւնը քաջ են գալիս իրենց «դեղին» սոցիալ-դեմոկրատիայի հետեից, վոր իմպերալիստական պատերազմի ժամանակ այնպես ամոթալի կերպով դավաճանեց պրոլետարիատի կենսական շահերին: Ֆրանսիայում, ճիշտ է, սինդիկատները հաշիւ առան Փարիզի կոմմունայի փորձը, յերբ դեմոկրատական հանրապետութիւնը դաժան խստութեամբ արյան մեջ խեղդեց բանվորական ապստամբութիւնը, բայց սինդիկալիստները հրաժարվեցին պարլամենտական իլլիտլզաներից (խաբուսիկ հույսերից): Այս կողմից նրանք տարբերվում են իրենց անգլիական և գերմանական ռեֆորմիստ յեղբայրներից: Բայց միևնույն ժամանակ աշխատանքի ընդհանուր ֆեդերացիան մինչև որս ել գեռ ևս չի հասել այն գիտակցութեան, վոր կարողանա ըմբռնել հեղափոխական կուսակցութեան մեծ նշանակութիւնը պրոլետարական կռիւի հաջողութեան համար:

Միայն ամենավերջին ժամանակներս, արհեստակցական միութիւններում կազմակերպված արտասահմանյան բանվորները նկատելիորեն արտահայտում են զուտ-պրոլետարական հեղափոխական գիտակցութիւն: Պատերազմից հետո տեղի ունեցած դեպքերի ազդեցութեան տակ բանվորներն ավելի ու ավելի յին համոզվում, վոր բուրժուական իրավակարգում արհեստակցական միութիւնների բոլոր ջանքերը՝ թուլացնելու շահագործման լուծը, եյական ու կայուն հետեանքներ չեն տալիս: Վաղձեց է, վոր կապիտալիստները յերգում էյին, իսկ սոցիալ-դավաճանները ձայնակցում (դամ էյին քաշում) բուրժուազիայի և պրոլետարիատի ազգային շահերի «միութեան», «քաղաքացիական խաղաղութեան», «ներգաշնակութեան» (ընդհանրութեան) մասին: Վաղձեց է վոր աշխատավորներին համարյա թե հալի կաթ էյին խոստանում, միայն թե ոգնէյին արյունախումբներն պաշտպանելու իրենց սիրելի հայրենիքը և խելու ոտարի հողերը: Իրենց առաջնորդներից խաբված արհեստակցական միութիւնները «աշխատեցին», ոգնեցին հայրենասիրական կամպանյան տանելուն: Իսկ այժմ ինչ ենք տեսնում:

Հազիւ բուրժուազիան ուշքի յեկավ իր վախից և իսկույն սրշավաճ սկսեց բանվոր դասակարգի դէմ: Այն զիջումները, վոր պատերազմի ժամանակ արել էյին, ամբողջովին հետ խլվեւին: Ամենուրեք, — վոչ միայն պարսկա (հաղթված) Գերմանիայում, այլ և Անգլիայում, Ֆրանսիայում, Ամերիկայում, վոր պատերազմից հաղթող դուրս յեկան, աշխատավարձը կրճատվում է, բանվորական որը յերկարում և աշխատանքի պայմանները որ որի վրա վատանում: Իսկ յերբ բանվորները փորձում են պաշտպանել իրենց նվաճած իրավունքները ու պաշտպանողական գործադուլ են հայտարարում, այն ժամանակ խաղէյինները պատասխանում են լոկաուտով, այսինքն միմիանց հետ համաձայնութեան գալով միաժամանակ փակում են տվյալ արտադրութեան բոլոր ձեռնարկութիւնները, և ըմբոստ բանվորների բազմահազար մասսաները միանգամից փողոց են նետվում: Գործադրկութիւնը հասել է չտեսնված չափերի: Պրոլետարիատի դրութիւնը դառել է ավելի վատ, քան պատերազմից առաջ եր: Այս թավական չէր կարծես, ահա հանդես են գալիս ֆաշիստական (սև հարյուրակային) բանդաները, վորոնք բուրժուական կառավարութիւնների զրգումով սպանում են բանվորական շարժման առաջնորդներին և քար ու քանդ անում արհեստակցական միութիւնները, բանվորական թերթերի խմբագրատները:

Ահա ձեզ և ներդաշնակութուն, և հավի կաթ...

Ստոր, գիշատիչ բուրժուազիան իր անֆորձների մասին գտնուում և այնպես, ինչպես Աստվածաշնչի Հոբ Եփրանելին ասածու ժամին. «Յես տվեցի, յես ևլ հետ առա. որհնված լինի իմ անուներ»:

Բայց խաբված բանվորների մեջ այդ «աստվածային» գործերը, ի հարկե, որհնանք չեն առաջացնում, այլ անհեծք: Այժմ ամեն մեկը պարզապես կարող է համոզվել, թե վորքան անկայուն են արհեստակցական միությունների նվաճումները, յեթե պահպանվի կապիտալիստական իրավակարգը: Նույնիսկ ծանր կոմիվ խլված գիշումները, վոր որենսդրական ակտերով հաստատված են, նույնպես կասկածելի յեն, քանի դեռ իշխանության գլուխը բուրժուազիան է կանգնած, թեկուզ ամենա-արխիզեմոկրատականը:

Ահա թե ինչու հեղափոխական բոլշևիկները միշտ ևլ նախազգուշացնում եյին, թե արհեստակցական միությունները չլ պետք է տարվին դուռ «եկանոմիկայով», այլ անհրաժեշտ է կուսակցության ընդհանուր գաղափարական ղեկավարությամբ վարել նաև հեղափոխական, քաղաքական պայքար: Յեվ, — ճշմարտությունը պետք է տալ ուսական արհեստակցական միություններին, — նրանք բավականին արագ, կարճ ժամանակում ազատվեցին իրենց արտասահմանյան յեղբայրների նախապաշարումներից և իրենց ճակատագիրը կապեցին հեղափոխական կուսակցության ճակատագրի հետ: Դա, ի հարկե, բացատրվում է նրանով, վոր ուսական արհմիությունները, հակառակ Արևմտյան Յեվրոպականներին առաջացան բանվորական մասսաների քաղաքական և քաղաքացիական իրավադրկության միջավայրում: Ցարիզմի մոայլ ժամանակաշրջանում միության պատկանելն արդեն համարվում էր խռովարարություն (սկրամոլա): Վորի համար թանգ եյին նստեցնում և աքսորում Սիբիր:

Եկառավարությունն ինքը, նախ քան վորևե սոցիալիստ կլ մտածեր այդ, միջոցներ ձեռք առավ, վոր գործադուլին տա քաղաքական բնավորություն: Նա չէր, վոր բանվորներին սկսեց բռնել իբրև վոճրագործների, ձերբակալել և աքսորել: Նա չէր, վոր ամեն կողմ լրտեսներ և պրովակատորներ էր ուղարկում: Նա չէր, վոր բռնում էր ձեռքի տակն ընկածին: Նա չէր, վոր խոսառացով ողնել գործարանատերերին, վորպեսզի վերջիններս չգիշեն: Նա չէր, վոր հալածում էր բանվորներին, հենց միայն նրա համար, վոր գործադուլավորների ոգտին փող եյին հավաքում: Ամենքից լավ կառավարությունն ինքն էր բացատրուած

բանվորներին, վոր իրենց պատերազմը գործարանատերերի դեմ անխուսափելիորեն դառնալու յե պատերազմ կառավարության դեմ:*)

Այգալիսի պայմաններում մեր արհեստակցական միությունները միացնում եյին, կարելի յե ասել, ընտրովի տարրերին՝ առավել ակտիվ և զարգացած բանվորներին, վորոնք, բնական է, ավելի շուտ կարող եյին յուրացնել այն ճշմարտությունը, թե ամեն մի դասակարգային կոիվ — քաղաքական կոիվ է:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ.

Իհարկե, սկզբում ուսական միություններն ևլ — մեղքն ինչու թագցնենք — վերապրում եյին ընդհանուր-յեվրոպական «մանկական հիվանդությունները»: Հենց թեկուզ սկսենք նրանից, վոր մեր բանվորների առաջին տնտեսական կազմակերպությունները — վոր շատ անգամ ըստ իրենց կազմի նույնիսկ, դուռ դասակարգային չեյին — գլաղվում եյին առավելապես կիսաբարեգործական փխտոգնության գործով: Դեռ ևս անցյալ դարի վերջին գործում եյին գործարանային գանձարկղները, փոխադարձ ոգնության ընկերությունները և նույնիսկ համադասային (всесословные) թաղման գանձարկղները: Գործակատարների միությունները թույլ եյին տալիս տերերին մասնակցել, վորոնք իրենց «նվիրաբերությունները» համար նույնիսկ պատվալոր անդամ եյին ընտրվում...

Բացի խոշոր միավորումներից (մետաղագործների, փայտագործների, տպագրական գործի) մեզ մոտ գոյություն ունեյին նաև մանր միություններ, կազմված ըստ համաքարությունների (пех — կաղապարողներ, ատաղձագործներ և այլն) և նույնիսկ ըստ առանձին յենթացեխերի, ինչպես որինակ կանացի վերնագրեասների բանվոր-դերձակների միությունը Ուգեսայում:

Բացի զրանից, մի ժամանակ մեզ մոտ գոյություն ունեյին միություններ, վոր կազմակերպել եյին պահնորդական բաժանմունքի պետ Չուբատովը և նրա արբանյակները, վորոնց մեջ մտել եյին բավական թվով կիսագիտակից բանվորներ: Այսպես, Մուսկվայում պահնորդական բաժանմունքը կազմակերպել էր «Անկա-ճիբակ» արտադրության բանվորների ընկերությունը, վորին անդամ եյին նաև պոլիցիային պաշտոնյաները, գործարանների ադմինիստրացիան, յեկեղեցու պաշտոնյաները (ինչ «մեխանիկ-

*) Լենին. «Յերկրի ժողովածու հատոր I, յեր. 293.

ներ» են, չէ)...) Սրանից հետո կազմվեց ջուլհակների ընկերություն. այստեղ ել նախագահն պահնորդ (охранник) Կրասիվսկին եր, իսկ պատվավոր անդամներ եյին միտրոպոլիտ Վլադիմիրը, ավագ-վոստիկանապետ Տրեպովը, գործարանատերեր Պրոխորովը, Բելյակը և ուրիշները (նույնպես «Չուլհակներ»-են)...) Նախկին Պիտերում «գործարանային բանվորների ուսսական ընկերությունը» ղեկավարում եր հայտնի արկածախնդիր Գապոնը, վոր կապեր ունեւր Կոմս Վիտտեյի հետ: Նման միություններ կային և գավառներում: Բոլոր նման պրովոկատորական միությունների նպատակն եր հիմարացնել բանվորներին, մըթնեցնել նրանց դասակարգային գիտակցությունը, ներշնչել նրանց ազգայնական, միապետական, կրոնական վոգեի, վորպեսզի այդպիսով նրանց հեռու պահեյին ինքնակալության և բուրժուազիայի դեմ մղվող իսկական պրոլետարական հեղափոխական պայքարից:

Այս մուայլ ժամանակներում բոլշևիկները անձնազոհաբար աշխատում եյին խաբված մասսաների գիտակցությունը լուսավորելու: «Ցարիզմի ժամանակ, մինչև 1905 թիվը մեզ մոտ, -ասում ե Լենինը, -չկային վոչ մի «լեզալ հնարավորություններ», բայց յերբ Զուբատովը կազմակերպում եր սև հարյուրակային բանվորական ժողովներ և բանվորական ընկերություններ, վորպեսզի հեղափոխականներ վորսա և նրանց դեմ կովի, մենք այդ ժողովներին և այդ ընկերություններում ուղարկում եյինք մեր կուսակցության անդամներին (յես անձամբ հիշում եմ ընկ. Բարուշկինին, Պիտերի աչքի ընկնող բանվորներից մեկին, վորին 1906 թվին զնդակահարեցին ցարական գեներալները), վորոնք մասսայի հետ կապ եյին հաստատում, սովորում եյին այդպիսի պայմաններում ագիտացիա մղել և դուրս եյին կորզում բանվորներին Զուբատովցիների ազդեցության տակից: *)

Գործադուլային շարժման ալիքն ու արյունոտ կիրակին (9 հունվարի) բաց արին բանվորների աչքերը և ըմբռնել տվին իրերի իսկական դրությունը և մղեցին նրաբց զուտ պրոլետարական դասակարգային միավորումներ կազմակերպելու ուղիով: Հետագայում, հեղափոխական պայքարի բոցերում ուսսական արհեստակցական միությունները արագորեն բուժվեցին համբարականության և ռեֆորմիզմի հիվանդությունից: Ամենոր-

*) Լենին. «Ձախություն» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ», հատոր XVII.

յա փորձով բանվորներն համոզվում եյին, վոր ձեռնարկուների միությունների դեմ հաջող կոիվ մղելու համար անհրաժեշտ են լայն առագորակաճ միություններ: Պիտի ասել, վոր մեր հայրենիքի կենսակուլները (живоимоты) շատ շուտով փոխ առան իրենց յեվրոպական կոնկրաներից շահագործվողների «չափազանց» պահանջներից պաշտպանվելու մեթոդները: Արդյունաբերության ամբողջ ճյուղի ձեռնարկուները (մետաղագործարանատերերը, մանուֆակտուրիստները, նավթարդյունաբերողները, կաշեգործարանատերերը և այլն) միություն եյին կազմում, միմիանց ոգնում եյին բանվորների դեմ, միաժամանակ լոկաուտներ եյին հայտարարում, արտաքսում եյին արհեստակցական միության անդամներին, «սև ցուցակներ» եյին սարքում (այսինքն ցուցակադրում եյին «անբարիմիտ» բանվորներին, վորպեսզի վոչ մի գործարանում նրանց աշխատանք չտան) և այլն:

Պարզ ե, վոր այդ «յեվրոպական մեթոդների» դեմ համբարական ցաք ու ցրիվ միությունները անդոր եյին և կովել չեյին կարող: Տվյալ արտադրության գործարանատերերի միությանը պետք եր հակադրել համապատասխան արտադրական բանվորական միություն:

Արհեստակցական միավորումների համակենտրոնացման տենդենցը (ձգտում) մեզ մոտ նկատվեց դեռ ևս 1906 թ.: Այն ժամանակ տեղի ունեցող արհեստակցական միությունների Համառուսական II-րդ կոնֆերենցիային վորոշեց, վոր միություններ կազմակերպելու նրանք չպետք ե բաժանվեն մանր ճյուղերի՝ արհեստների: Բայց արհեստակցական կազմակերպություններում արտադրական սկզբունքը լրիվ կերպով հաջողվեց իրականացնել միայն Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխությունից հետո, վոր բանվոր դասակարգին առաջին տնգամ տվեց զարգացման ռեալ (իսկական, իրական) ազատություն: Արհեստակցական միությունների Համառուսական I-ին համագումարը (հունվար 1918 թ.) վորոշեց, իսկ II-րդ համագումարը (1919 թ.) վերջնականապես սահմանեց կազմակերպման սկզբունքը: «Մի առագորություն մի միություն»): Դա նշանակում ե, վոր տվյալ արտադրության, ասենք Պրոխորովի մանուֆակտուրայի, բոլոր բանվորները մըտնելու յեն մի միություն մեջ (Չուլհակներ), թեկուզ նրանք ունենան տարբեր արհեստներ՝ Չուլհակներ, մանածագործներ, յերկաթագործներ, մոնտյորներ և այլն¹⁾:

¹⁾ «Արտադրական միություն նշանակում ե այնպիսին, վոր կազմակերպում ե բանվորներին ըստ արտադրությունների, վոր տեխնիկայի և կուլտուրայի տվյալ մակարդակում անխուսափելի յե (թե Ռուսաստանում և թե ամբողջ աշխարհում)»: Լենին

Դրա հետ միասին, համաձայն նույն II համագումարի բանաձևի, արհեստակցական միությունները պետք է լինեն զուգասակարգային (այսինքն, անդամագրվել կարող են բանվորներն ու բանվորուհիները, վորոնք բացառապես ապրում են իրենց աշխատավարձով), ապադավանանքային և միջազգային (այսինքն, վոր միացնում է բոլորին, առանց կրոնի, ցեղի և ազգության խտրության): *

Իսկ հետո այն պայմանները, վորոնց մեջ ապրում և կրուվում էր բանվոր դասակարգը ինքնակալ Ռուսաստանում, նպաստեցին արհեստակցական միություններին արագ կերպով յուրացնելու քաղաքական գրագիտությունը:

Հայտնի չէ, վոր հին ռեժիմի ժամանակ նույնիսկ խաղաղ տնտեսական գործադուլը հալածվում էր, իբրև «բուհա»: Գործարանատիրոջ առաջին հրավերով գալիս ելին վոստիկանները, ժանդարմները, կոզակները, — ձերբակալում էին, ծեծում և նույնիսկ անգին գործադուլավորների վրա զինք բանեցնում: Այստեղ «եկանոմիկայի» և «քաղաքականության» մեջ յեղած կապն այնքան թափանցիկ էր (աշկարա), վոր նույնիսկ կիսագիտակից բանվորի համար աչքի յեր ընկնում: Այն ժամանակվա պետական իշխանության դերը, իբրև բուրժուազիայի շահերի պաշտպան մի որդանի, չափազանց պարզ էր, ակնբախ:

Նույնչափ պարզ կերպով արտահայտվում էր այն, վոր որենսդրական ռեֆորմները կախված էին ակախի դասակարգային կովից: Շատ հեշտությամբ կարելի չէ հաստատել, վոր Ռուսաստանում բանվորական որենսդրության ամենագլխավոր ակտերը անմիջականորեն կապված են գործադուլային շարժման հետ: Ցարական-բուրժուական կառավարությունը դաժանորեն, բարբարոսական ձևով ճնշելով բանվորական «բուհաները», միաժամանակ ստիպված էր լինում ակամա զիջումներ անել: Այսպես որ. 1880 թ. տարերային կերպով սկսում են մասսայական գործադուլներ՝ Յարցևի մանուֆակտուրայում (2600 բանվոր), Բրեստի և Բորիսոգլեբսկի յերկաթուղային արհեստանոցներում և այլն: Յեղ ահա 1882 թ. (հունվարի 1-ին) յերևում է առաջին

*) Թե մեզ մոտ ինչպես էր ընթանում արհեստների, համքարական և նույնիսկ կաստայական սկզբունքներով կառուցված մանր միությունների համակենտրոնացման պրոցեսը, կարելի չէ տեսնել բրոշյուրի վերջում տրված «Հայկելված»-ում:

որենքը՝ փոքրահասակների աշխատանքի պաշտպանության մասին:

1884 թվին Հոկտեմբերյան յերկաթուղագծի, շոգեքարչների (պարավոչների) արհեստանոցների, Ժիրարգովի և Վադնեսենսկու մանուֆակտուրաների բանվորների գործադուլներից հետո, հրատարակվում է գործարանային տեսչություն (ինսպեկցիա) մտցնելու որենքը: 1885 թ. հունվարին տեղի յե ունենում Որենվո-Ջուլեի ջուլհակների հուշակավոր գործադուլը, և նույն թվի հունիսի 3-ին հրատարակվում է որենք, վորով արգելվում է կանանց և դեռահասների գիշերային աշխատանքը բամբակեղենի, կտավեղենի և բրգեղենի գործարաններում: Լենինգրադի 10 հազար ջուլհակների հսկայական գործադուլին (1896 թ.) հետևում է 1897 թ. հունիսն 2-ի որենքը, վոր առաջին անգամ էր նորմայի տակ դնում բանվորական որը (11 1/2 ժամ): Վերջապես, ռուսական արհեստակցական միությունները լեզալ գոյություն ունենալու իրավունքը (ի հարկե, խիստ սահմանափակ) ստացան միայն 1906 թ., («Մարտի 4-ի ժամանակավոր կանոններ ընկերությունների և միությունների մասին») այն էլ շնորհիվ 1905 թ. գործադուլների, վոր ըստ քանակի, դիմացկանության և հեղափոխական վոգեորության դեռ և տեսնված չէին:

Ահա թե ինչու պրոլետարիատի բաց աշկարա թշնամիներին ուկարծեցյալ բարեկամներին չհաջողվեց քաշել ռուսական արհեստակցական շարժումը մաքուր եկոնոմիզմի տիղմի մեջ, հրաժարեցնել քաղաքական պայքարից, վոչ էլ՝ գայթակղեցնել քաղաքական կուսակցություններից «անկախ» լինելու թեորիայով (տեսությամբ):

Պահնորդների և պրովակատորների կաղմակերպած «բանվորական» միությունները քանդվում էին կապիտալի դեմ ձեռնարկած հենց առաջին ակտիվ յելույթի ընթացքում: Անհաղողության հանդիպեցին նաև կադետների, մենշևիկների և հսերների բոլոր փորձերը ձվատելու (կաստրացիայի յենթարկելու, «կրտելու», աղապացնելու, ներքինիացնելու) մեր արեստակցական միությունները, հանելով նրանց հեղափոխական բովանդակությունը և նրանց հիմքում բուրժուական դեմոկրատական ծրագիր դնելով: Վճռական ըոպեյին Ռուսաստանի արեստակցական միությունները գնացին միակ իսկական բանվորական կուսակցության՝ բոլշևիկ-կոմունիստների հետևից և զրանով ստեղծե-

ցին պատմութեան մեջ դեռ ևս չտեսնված, չեղած հնարավորութիւններ աշխատանքի լրիվ և բազմակողմանի ազատագրման համար:

ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՇԱՐՃՄԱՆ ԾԱՂԿՈՒՄԸ

Թե ինչ հսկայական քայլերով եր ընթանում մեր արհեստակցական միութիւնները զարգացումը (շնորհիվ ընդունած ճիշտ գծի), կարելի չէ դատել հենց միայն համեմատելով կազմակերպված բանվորների քանակը մեզ մոտ և արտասահմանում: Համաձայն 1912 թ. վիճակագրական տվյալների, Անգլիայում, — արհեստակցական շարժման որրանում (որորոցում), — ամբողջ յերկրի բոլոր բանվորների միայն 22⁰/₀-ն ելին արհեստակցական միութիւններում, Գերմանիայում՝ նույնքան, Ամերիկայում աւելի քիչ՝ 10⁰/₀-ը, Ֆրանսիայում՝ ընդամենը 9⁰/₀-ը, իսկ միզ մոտ այժմ արհեստակցական միութիւններն ընդգրկում են Ռուսաստանի բանվոր դասակարգի մինչև 90⁰/₀-ը:

Յեթե մտաբերենք, վոր 1907 թվականի սկզբներին Ռուսաստանում արհեստակցական միութիւններում կար ընդամենը 245,000 բանվոր, և նույնիսկ 1917 թ. փետրվարյան հեղափոխութիւնից հետո՝ կես միլիոնից պակաս, — պարզ կլինի, թե ինչ հսկայական նշանակութիւն ունի բանվորական տնտեսական կազմակերպութեան, — արհեստակցական միութեան, — համար բուրժուազիայի քաղաքական իշխանութեան տապալումն ու պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը:

«Կապիտալիստական հասարակութեան մեջ, բուրժուական դեմոկրատիայի տերապիութեան որով, — գրում եր Լենինը, — լավագոյն դեպքերում, ամենաառաջվոր յերկներում, կուլտուրայի և քաղաքակրթութեան զարգացման տասնյակ, յերեքն եր հարուրավոր տարիներից հետո յերեք չի յեղել, վոր արհեստակցական միութիւնները ընդգրկեն ավելի, քան վարձու աշխատավորների մեկ հինգերորդ մասը: Վերին փոքրիկ շերտն եր մասնակցում նրանց մեջ, և այդ վերին շերտից չնչին մասը կաշառվում եր կապիտալիստներից, վորպէսզի իբրև բանվորների առաջորդներ տեղ բռնեն կապիտալիստական հասարակութեան մեջ: Ամերիկական սոցիալիստները այդպիսի մարդկանց անվանում են «կապիտալիստական դասակարգի բանվորական լեյտենանտներ» *):

*) Տեղակալ. գինվորական աստիճան Ֆրասիական բանակում, վոր համապատասխանում է հին ցարական բանակի պորուչիկին: Ծ.Թ.

Նրանք, բուրժուական կուլտուրայի ամենաազատ յերկրում, ամենադեմոկրատիկ բուրժուական հանրապետութեան մեջ, — ավելի ելին նկատում պրոլետարիատի չնչին վերին շերտի այդ դերը, վորոնք փաստորեն ծառայութեան են մտել բուրժուազիայի մոտ, նրա կողմից կաշառված և գնված են: *)

Պրոլետարիատի դիկտատուրայի հաստատվելն Ռուսաստանում արմատապես փոխեց արհեստակցական շարժման հետագա զարգացման ընթացքը:

«Այն մեծագոյն հեղաշրջման հետ միասին, վոր տեղի ունեցավ պատմութեան մեջ, յերբ պրոլետարիատն իր ձեռքն առավ պետական իշխանութիւնը, արհեստակցական միութիւններն իրենց ամբողջ գործունեութեան մեջ զգում են մեծ բեկումն, նրանք դառնում են նոր հասարակութեան ստեղծագործողները, վորովհետև այդ հասարակութեան ստեղծագործողները կարող են լինել միմիայն մեծաքանակ մասսաները ճիշտ այնպէս, ինչպէս ճորտատիրական իրավունքի դարաշրջանում հարյուրներն ելին ստեղծագործում, կապիտալիստական դարաշրջանում պետութիւնը կառուցում ելին հազարներն ու տասնյակ հազարները, իսկ այժմ սոցիալիստական հեղաշրջումը կարող է կատարվել միայն այն դեպքում, յերբ պետութիւնը կառավարելուն ակտիվ, անմիջական և գործնական կերպով կը մասնակցեն տասնյակ միլիոնները:» **)

Հոկտեմբերյան հեղափոխութեան առաջին շրջանում արհեստակցական միութիւններն իրենց ընդհանուր աշխատանքի ընթացքում ձուլվեցին նոր պետական իշխանութեան հետ: Այդ տեղի ունեցավ այն պատճառով, վոր ապստամբած պրոլետարիատն առաջ, վորին ղեկավարում եր հեղափոխական կուսակցութիւնը, դրված ելին վոչ թի նեղ արհեստակցական, այլ ընդհանուր դասակարգային խնդիրներ: Խոսքը բանվորական ուժը ձեռնտու պայմաններով վաճառելու մասին չեւ, այլ սոցիալիստական հեղափոխութեան, վորը վոչնչացնելու յեր հասարակութեան բաժանումը տարբեր դասակարգերի և մի դասակարգը մյուսի կողմից շահագործվելուն: Տնտեսական պայքար մղելու կարիք չեւ դգացվում, քանի վոր մազնավոր կապիտալիստները չքացել ելին, և

*) Լենին. «Ձախութեան յերեխայական հիվանդութիւնը»

**) Լենին. «Ձախութեան յերեխայական հիվանդութիւնը»:

քաղաքական իշխանությունը գտնվում էր հենց իրենց աշխատավորների ձեռքը: Այժմս բոլոր գիտակից բանվորների ընդհանուր խնդիրը, ինչ կազմակերպության մեջ էլ վոր նրանք լինեն՝ միությունական, խորհրդային թե կուսակցական՝ վոչ թե պետական իշխանության կործանումն էր, ինչպես վոր էր հեղափոխությունից առաջ, այլ ընդհակառակը, այժմ ընդհանուր նպատակը նոր իշխանության ամրացումն է: Ահա թե ինչու Արհեստակցական միությունների Համառուսական I համագումարը, վոր գումարվեց 1918 թ. հունվարին, մի բանաձև հանեց, թե «կատարվող սոցիալիստական հեղափոխության զարգացման պրոցեսում արհեստակցական միությունները դառնալու յեն սոցիալիստական իշխանության ուղիքները, վորոնք իբրև այդպիսիները, փոխադարձ յենթարկման սկզբունքով, մյուս կազմակերպությունների հետ միասին, աշխատելու յեն նոր սկզբունքները կյանքի մեջ կիրառելու համար»:

«Արհեստակցական միությունները, — ասվում է այդ բանաձևում, — իբրև պրոլետարյատի դասակարգային կազմակերպություններ, վոր կառուցված են արտադրական սկզբունքով, իրենց վրա յեն վերցնելու արտադրությունը կազմակերպելու և յերկրի քայքայված արտադրողական ույժերը վերականգնելու գլխավոր հոգսը: Միություններն ամենայնաանհուն կերպով մասնակցելու յեն արտադրությունը կանոնավորող բոլոր կենտրոնների աշխատանքներին, կազմակերպելու են բանվորական հսկողություն, բանվորական ույժի ցուցակագրություն և բաշխումն, կազմակերպելու յեն գյուղի և քաղաքի միջև փոխանակություն և այլն»: Յեվ իսկապես, մենք տեսնում ենք, վոր արհեստակցական միությունները ամենաակտիվ մասնակցությունն էյին ցույց տալիս գանաղան մորիլիզացիաներին, կազմակերպում էյին կարմիր զբվարդիս, տալիս էյին զինվորական և պարենավորման խմբեր, հիմնում էյին դիսցիպլինար դատարաններ. նրանք փաստորեն ստեղծեցին Աշխատանքի ժողովրդական կոմիտարիատը, — մի խոսքով կատարում էյին զուտ պետական ֆունկցիաներ:

«Արհեստակցական միություններն իբրև պրոլետարիատի ամենաբազմամարդ կազմակերպություններ, հենց այժմս, իշխանություն իրենց ձեռքն հանանող քաղաքական հեղաշրջումից հետո, ստիպված են առանձնապես մեծ դեր խաղալ և վորոշ չափով դառնալ քաղաքական գլխավոր մարմիններ, վորովհետև քաղաքականության բոլոր հին հասկացողությունները քաղա-

քական հեղաշրջումով տապալված և շուտ են տված:

«Հին պետությունը, թեկուզ հենց բուրժուական հանրապետություններից ամենալավն ու ամենադեմոկրատիկը, յերբեք այլ բան չի յեղել և չէր կարող լինել, բացի բուրժուազիայի և նրանց դիկտատուրան, վորոնց ձեռքին էր արտադրության գործիքները, հողը, յերկաթուղիները, մի խոսքով բոլոր նյութական միջոցները, աշխատանքի բոլոր գործիքները. առանց վերջինները տիրելու աշխատանքը միշտ էլ ստրուկ էր մնա:

«Իսկ քաղաքական իշխանությունը պրոլետարիատի ձեռքն անցնելով, արհեստակցական միություններն ստիպված են ավելի ու ավելի հանդես գալ նոր հասարակություն կառուցողների դերում, վորի կազմակերպումը փոխարինելու յե նախկին շահագործող դասակարգը, բոլոր հին տրադիցիաները (սովորությունները) և հին գիտության նախապաշարունակները»:

Ամբողջ արդյունաբերության զարգացման շրջանում արհեստակցական միությունները կազմակերպում էյին արտադրությունը կառավարելու մարմիններ՝ գործարանային վարչություններ, գլխավոր վարչություններ, ժողովրդական տնտեսության խորհուրդներ և այլն: Դրա հետ միասին արհեստակցական միություններն ակտիվ կերպով մասնակցում էյին գյուղատնտեսությունը կազմակերպելուն, խորհրդային տնտեսություններն արդյունաբերական ձեռնարկություններին հատկացնելուն, «պրոլետարական գյուղատնտեսություն» ստեղծելուն: Կուլտուրական ասպարիզում արհեստակցական միությունները, Լուսժողկոմատի հետ միասին կազմակերպել են բանվորների պրոֆտեխնիքական կրթության գործը և այլն:

Մյուս կոմից, խորհրդային պետությունն իր վրա յե վերցրել միշտը ֆունկցիաներ, վոր առաջ արհեստակցական միությունները էյին կատարում՝ ոգնության և նպաստների բոլոր տեսակներն անցան Սոցիալական Ազահովագրության կամ Առողջապահության կոմիտարիատներին, կուլտ-կրթական խնդիրներն իրագործում էր Լուսավորության ժողովրդական կոմիտարիատը: Զուտ միութենական գործունեյության մի քանի այլ տեսակների կարիքն այլևս չէր զգացվում: Ինչ կարիք կար աշխատանքի վարձելու բյուրոյի, յերբ կիրառվում էր աշխատանքային պարտավորություն (повинность): Իրավաբանական ոգնու-

*) Լենին. Ճառ, արտասանած Արհմիությունների Համառուսական II համագումարում: Հատ. XIX:

թյան կարիքը չկար, քանի վոր հին որենքները վերացված ե-
յին, իսկ նոր կողեքս (որենքների ժողովածու) դեռ ևս մշակված
չէր: Այն ժամանակ նույնպես հարկավոր չեյին վնչ գործադու-
լային գանձարկները, վնչ հաշտարար ատյանները, վնչ եւ միջ-
նորդ դատարանները:

Ն Ո Ր Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր

Միայն նոր տնտեսական քաղաքականութեան յերևուեց
հետո, վոր առաջացավ միջազգային սոցիալական հեղափոխու-
թյան զարգացման դանդաղման պատճառով, մեր արհեստակցա-
կան միութիւնները նորից ստանում են իրենց նախկին խըն-
դիրները, բայց արդեն այլ ձևով: Համաձայն Հ.Ա.Մ.Կ.Խ.-ի 2-րդ
Պլենումի (փետրվար 1922 թ.), արհեստակցական միութիւննե-
րին հիմնական և ամենագլխավոր խնդիրն է՝ ամեն կողմից և
բազմակողմանիորեն պաշտպանել իրենց անդամներին:

Այս հանգամանքով արհեստակցական միութիւնները թո-
ղեցին զուտ-պետական և վարչական-տնտեսական ֆունկցիանե-
րը, վոր նրանք կատարում եյին «զինվորական կոմունիզմի»
շրջանում, վորպեսզի իրենց ուշադրութիւնը կենտրոնացնեն
զուտ արհեստակցական խնդիրների վրա: Ձևական ընդհանուր
անդամութիւնից, վոր քաղաքացիական պարտավորութեան
(ПОВИННОСТЬ) բնույթ էր կրում, արհեստակցական միութիւններն
անցան կամավոր անդամագրութեան: Հավասարեցուցիչ տարիֆի
քաղաքականութիւնը, վոր անհրաժեշտ էր այն շրջանում, յերբ
աշխատավարձը պետութիւնն էր կարգավորում, տնտեսական
հաշվի անցնելիս փոխարինվեց նոր տարիֆային քաղաքականու-
թյամբ, վորի ժամանակ տարբեր կվալիֆիկացիայի տեր մարդ-
կանց տարբեր վարձատրութիւնն են տալիս, նպատակ ունենալով
քաջալերել աշխատավորներին, վորպիսզի նրանք բարձրացնեն
աշխատանքի արտադրողականութիւնը: Արհեստակցական միու-
թիւնները հավաքական պայմանագրեր են կնքում, հիմք ունե-
նալով ձեռնարկութեան տնտեսական ռեսուրսների (միջոցների)
ճիշտ հաշվառումը, հետագայում հետևելով, վոր յերկու կող-
մերն եւ ճշտութեամբ կատարեն իրենց պարտավորութիւնները
Միաժամանակ ուժեղացել է արհեստակցական միութիւններին
աշխատանքը՝ աշխատանքի պաշտպանութեան և բանվորների
կենցաղի լավացման ասպարիզում և խորացել է կրթական աշ-
խատանքը՝ բարձրացնելու համար միութենական լայն մասսանե-
րի կուլտուրական և մտավոր մակարդակը:

Բայց յեթե մինչև հեղափոխութիւնը բոլոր այդ խնդիրնե-
րի իրականացումը հանդիպում էր բուրժուական կառավարու-
թյան դիմադրութեանը, ապա այժմ, ընդհանրապէս, խորհրդա-
յին պետական իշխանութեան ուժը արհեստակցական միութիւն-
ների կողմն է: Այդ պատճառով եւ բանվորական շարժման վերջ-
նական նպատակները գիտակցած միութիւնները միաժամանակ
կոչւում են ին և՛ շահագործողների և նրանց կառավարութիւննե-
րի դեմ: Բայց այժմ միայն բանվոր-գյուղացիական իշխա-
նութեան ամրացումը կարող է մեզ փրկել ամեն տեսակ շահա-
գործումից: Իսկ խորհրդային պետութիւնը ամրացնել կարելի
է միմիայն յերկրի պրտադրողական ուժերի զարգացման, հա-
մառ, անձնագործ «սոցիալիստական կուտակման» և մեր ազգայ-
նացրած արդյունաբերութեան ամեն կերպ բարելավման ճանա-
պարհով, վորը մեր ամբողջ պրոլետարական շենքի հիմքն է
կազմում:

Նորից ստեղծվում են գործադուլային ֆոնդեր: Բայց միու-
թիւնները բավական սիրով գործադուլներ են կազմակերպում
միայն մասնավոր ձեռնարկութիւնների դեմ, իսկ պետական ձեռ-
նարկութիւններին վերաբերվում են խիստ զգուշութեամբ, վոր-
պեսզի չը կտրեն այն ճյուղը, վորի վրա մենք նստած ենք: Նո-
րից վերակենդանացան հաշտարար ատյանները, միջնորդ դա-
տարանները, կոնֆլիկտային հանձնաժողովները, բայց այս ան-
գամ բոլոր որենքները բանվորների կողմն են և իշխանութեան
մարմինների մասնակցութիւնն, ի դեմս աշխատանքի բաժիննե-
րի և ժողովրդական դատարանների աշխատանքային սեկցիանե-
րի, միմիայն նպաստում են բոլոր կոնֆլիկտների արգարացի
լուծելուն:

Հեղափոխական որինականութեան հաստատվելով, անհրա-
ժեշտ դարձավ և իրավարանական ոգնութեան Բյուրոն, վորպես-
զի բացատրվի և ոժանդակութիւն ցույց տրվի բանվորներին
ուգտվելու այն հսկայական իրավունքներից, վոր նրանց տալիս է
խորհրդային կողեքսը: Սոցիալական ապահովագրութիւնը հսկա-
յական չափերով թեթևացրեց արհեստակցական միութիւններին
աշխատանքը՝ հիվանդութեան, հաշմանդամութեան, խեղանդա-
մութեան դեպքերում, Գործադուրկներին ոգնութիւն ցույց տա-
լու գործն եւ նշանակալից չափով անցավ պետութեանը. վարձ-
ման բյուրոյի հետ միասին, վոր դարձավ աշխատանքի բորսա:
Միայն պետութեան միջոցների պակասութիւնը ստիպում է

արհեստակցական միություններին դեռևս ունենալ դործադուրկներին և փոխադարձ ոգնության իրենց զանձարկոյնները:

Դրա փոխարեն այժմս կուլտ-աշխատանքը դառնում է կարեորագույն ինքնուրույն խնդիր, փորովհետև նրա պարտականությունն է դաստիարակել արհեստակցական միություններին անդամներին կոմունիստական վերջով:

Արհեստակցական շարժման հետագա զարգացումը մեր խորհրդային Հանրապետություններին մեջ մեծ չափով կախված է նրանից, թե վորքան իրենք արհեստակցական միություններին անդամները կլինեն գիտակից, զարգացած, վորքան նրանք կհամակվեն իրենց առաջ գրված խնդիրներին մեծությամբ՝ արտադրության պրոցեսների գիտակցումով և աշխատավորների քաղաքական իշխանության հենարանի—մեր հասարակական տրեստեություն կատարելագործումով: Միայն այդպիսի պայմաններում մեր արհեստակցական միությունները կը կատարեն իրենց մեծ դերը՝ կոմունիստական դպրոցի դերը:

ՅԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպես պատմականորեն զարգանում և ձևափոխվում են արհեստակցական միությունները, նրանց խնդիրներն ու մեթոդները:

Առաջ գալով արդյունաբերական կապիտալիզմի զարգացման հետ միասին, իբրև բանվորական ույթ ծախողների տնտեսական կազմակերպություն, արհեստակցական միությունները նախ զբաղվում են փոխադարձ ոգնություն, հետո նաև սկսում են պայքարել աշխատանքի պայմանների բարելավման համար, աշխատելով իրենց ձեռք բերած մասնակի նվաճումներն ամրացնել բանվորական որենսդրության ձևով:

Յեթե համեմատելու լինենք թվերը, թե վորքան է ծախսում ժամանակակից արևմտա-յեվրոպական արհեստակցական միությունը դործադուրկային պայքարի և վորքան նպաստների,—առենք գործադուրկներին տրվող նպաստների,—վրա, մենք կը տեսնենք, վոր արհեստակցական շարժման զարգացման աճումով ստեղծվում է հակառակ պրապորցիա (համեմատություն), քանի գնում, այնքան ավելի յե ծախսվում արհեստակցական պայքարի վրա, քան թե նպաստներ բաշխելու: Դա նշանակում է, վոր դասակարգային պայքարի սուր կերպարանք ստանալու և պրոլետարական գիտակցություն աճման հետ միասին, արհես-

տակցական միությունները որպեսկոմիտեին ստիպված են լինում իրենց, գլխավոր ուղադրությունը դարձնել շահագործման հենց հիմքի (բազիսի) կապիտալիստական սեփականություն վրա:

Առանձին արհեստակցական միությունների կողմից առանձին ձեռնարկությունները դեմ մղվող տնտեսական պայքարից, մասնավոր կովից արհեստակցական միություններն անցնում են ամբողջ բանվոր դասակարգի ընդհանուր պայքարին՝ դեկավա-րություն քաղաքական կազմակերպություն—կուսակցություն:

Տնտեսական կարիքների ամենորոյա պաշտպանություն սկզբնական շրջանում բանվորական մասսան արդեն եկազմում է դասակարգ, հակադրված կապիտալին, բայց ինքն իրեն իբր այդպիսին չի գիտակցում: Աշխատանքի պայմանները բարելավելու համար մղված պայքարի պրոցեսում, այդ մասսան միանում է և արդեն հանդես է գալիս իբրև դասակարգ, վոր իր սեփական նպատակներն է առաջադրում: Այդ պայքարում, իսկական աղգամիջյան պատերազմում, միանում և զարգանում են ապագա ճակատամարտերի բոլոր տարրերը: Այդ աստիճանին հասնելով կոալիցիան (միությունը) ընդունում է քաղաքական բնավորություն: Վորահետև նրա պաշտպանած շահերը, դառնում են դասակարգային շահեր, իսկ դասակարգային պայքարը՝ քաղաքական կռիվ է» (Մարքս, «Ншцета Философии»-ի):

Բարենպաստ (նպաստավոր) պայմաններում (ինչպես վոր մեկ մոտ էր, 1917 թ.) արհեստակցական միությունները արագ և վճռականորեն ձեռնարկում են իրականացնելու բանվոր դասակարգի վերջնական նպատակները: Բուրժուազիային և նրա կառավարությանը հաղթելուց հետո, պայքարը փոխարինվում է շինարարություն: Նոր տնտեսական քաղաքականություն (նեպի), այսինքն պետական կապիտալիզմի պայմաններում պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ, արհեստակցական միությունները կովի և պաշտպանություն ֆունկցիաները միացնում են իրար: Հիմք ունենալով խորհրդային որենսդրությունը, նրանք առեն կերպ պաշտպանում են բանվորների իրավունքները, կրովելով պետական և տնտեսական մարմինների բյուրոկրատական հեղաթյուրումների դեմ: Միաժամանակ նրանք կովում են մասնավոր կապիտալի և հակահեղափոխություն դեմ, ամեն միջոցներով պաշտպանելով աշխատավորների տնտեսական տիրապետությունն ու քաղաքական իշխանությունը: Տարբեր ճանապարհներ

րով մեր արհեստակցական միությունները գնում են դեպի մի նպատակ՝ աշխատանքի լրիվ և բազմակողմանի օգտագործումը:

Մանր, ցած ու ցրիվ յեղած արհեստակցական-համքարային միություններից պատմության մուրճը կռեց ու կոփեց խոշոր, հզոր արտադրական միավորումներ, վորոնց մեջ կազմակերպված և համարյա ամբողջ պրոլետարիատը:

Ուրեմն ամբացնենք մեր նվաճումները:

Ամեն կերպ ամբացնենք մեր դասակարգային միջադպրային հարմիր Արհեստակցական միությունները, վոր կռվում են կոմունիզմի փառավոր դրոշի տակ:

«Պահել այդ դրոշը, — կոչ էր անում Իլիչը, — և միաժամանակ անշեղորեն ընդարձակել սոցիալիզմը կառուցողների շարքերը, հիշել, վոր պետք է լինել նոր միլիոնների կառուցողներ, վորոնք իրենց փորձով սովորեցին սխալներ չանել, դեն չպրանել հին նախապաշարումները, սեփական փորձով սովորել արտագրություն կառավարելը (դեկավարելը) — անա արհեստակցական միությունների խնդիրը (անելիքը): Միայն սրա մեջ է այն անսխալական յերաշխիքը, թե սոցիալիզմի գործը ամբողջովին կը հաղթանակի, վերացնելով վերադարձի (հետ դառնալու) ամեն մի հնարավորությունը»:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՊՐՈՑԵՍԸ

Համաձայն գործարանային տեսուչների հավաքած տեղեկությունների առ 1 ն հունիսի 1907 թ. Ռուսաստանում հաշվվում է 861 «արհեստակցական ընկերություններ»: Այս թվից 643-ը գործում էին, մերժել էին ցուցակագրել 187 և փակել 31: Նրանք առաջացել էին աշխատանքի 102 ճյուղերում և հետևյալ անուններն էին կրում.

1. Զանազան կատեգորիաների գործակատարների, 2. Դերձակների, 3. Մեխանիքական, 4. Տպագրական գործի բանվորների, 5. Փայտագործների, 6. Հացթուխների և բուլոչնիկների, 7. Կոշակարների, 8. Առանձին արդյունաբերական ձեռնարկությունների, 9. Մաղաչին նյութեր մշակողների, 10. Փականագործների և զարրինների, 11. Կաշեգործների և կաշվեգործվածքներ պատրաստողների, 12. Ճարտարապետական-կառուցողական, 13. Դեղագործների, 14. Ծխախոտագործների, 15. Տղամարդկանց և կանանց լգիսարկակարների, 16. Վոսկերիչների, ժամագործների և արծաթ կտրողների, 17. Տնային ծառայողների, 18. Ներկարարների և տանիք ծածկողների, 19. Նավային (судовые) ծառայողների և տեղափոխող նավատորմի նավաստիների, 20. Մսեղենի արտադրության, 21. Շաքարեղենի-անշեղենի արտադրության, 22. Լուսանկարիչների, 23. Վարսավիրների, 24. Վարկային հիմնարկությունների ծառայողների, 25. Կահլարասիների և պատանների արտադրության, 26. Բրոնզի և վոսկու արծաթեղենի արտադրության, 27. Պետական գինու պահեստների բանվորների, 28. Ֆերկաթուղու և ելեքտրաքարշի ծառայողների, 29. Ալրաղացային արտադրության, 30. Պանդոկային պրոմիսլայի, 31. Ապակու արտադրության, 32. Վարդևորների և տեխնիկների, 33. Մաս-մաս թեյ վաճառելու գործի, 34. Ֆերկաթագործական և պողպատաձուլական արտադրության, 35. Ոռգանակագործների, 36. Գուլպագործների, 37. Ծխնելույզ մաքրողների, 38. Նավթարդյունաբերական արտադրության, 29. Հացահատիկ ընդունողների և առաքողների, 40. Վառարանագործների, 41. Պարտիզպանների, 42. Լուսամատակարարման և ելեքտրականության ձեռնարկությունների, 43. Կոոր ներկողների (արվանձի), 44. Ոռնարարների, 45. Աղյուսի, շքաղյուսի (Кафельного) արտադրության, 46. Մարմարի և քարի մշակության, 47. Բժիշկի ոգնականների

48. Նավահանգստի բանվորների, 49. Ալյուրի արտադրության, 50. Փոխադրողների, 51. Լեռնագործների, 52. Մետաղի և փայտի մշակության, 53. Գործի արտադրության, 54. Կառավարողների, 55. Թղթի արտադրության, 56. Շաքարի գործարանների բանվորների, 57. Կոճակների արտադրության, 58. Գծագրողների, 59. Քաղաքից քաղաք փոխադրողների (Првознова промысла), 60. Լվացարանների, 61. Ձկնաբլուրնարհրական և ճարպահալների, 62. Դեղատոների և զեղավաճառանոցների ծառայողների, 63. Քաղաքի հասարակական հիմնարկությունների բանվորների և ստորին ծառայողների, 64. Պայթուցիկ նյութերի և վառուղի մշակման, 65. Մեքենավարների և հանքային ջրեր բաշխողների, 66. Տեխնիկական և վարչական մասերի ծառայողների, 67. Արտադրության գործարանների բանվորների, 68. Գաղափար ջրերի գործարանների բանվորների, 69. Քարտաշների, 70. Պարանագործների, 71. Կարողների, 72. Որկեստրային նվագողների, 73. Յերամբշտական գործիքների գործարանների բանվորների, 74. Ռեհարների արտադրության, 75. Բեռնակիրների (грузокаателей) 76. Ծառայողին նյութերի մշակության, 77. Հատիկի և սերմի արտադրության, 78. Յեկեղեցական յերգիչների, 80. Գրասենյակային աշխատանքի, 81. Ապակի սրբողների, 82. Պարֆյունիերային արտադրության, 83. Հատակ լվացողների, 84. Անդրիների արտադրության, 85. Աշխարհյունաբերության, 86. Մեղվաբուծական, 87. Գետնափորների, 88. Նավաշինական, 89. Յեկեղեցական նկարիչների, 90. Գյուղատնտեսական, 91. Գործադուրիների, 92. Ման գոլիստների, 93. Արձիճա-անագային արտադրության, 94. Խցանի արտադրության, 95. Քիմիական արտադրության, 96. Զուտորի արտադրության (Джутового производства), 97. Թղթի և կարտոնի արտադրության:

Բացի դրանից կային նաև այնպիսի «Արհեստակցական ընկերություններ», ինչպես «Արհեստակցական համաքաղաքային» «Մանրավաճառների միություն», «Աշխատանքի ընկերություն», «Բանվորների կրթության ընկերություն», «Մասնավոր աշխատանքին ոժանդակության ընկերություն».¹⁾

Այդպես եր 1907 թ. Տաղ տարի անց, 1917 թ. գերջին և

¹⁾ Այս տեղեկությունները տալիս է Սվյատոսլավին «Արհեստակցական շարժումը Ռուսաստանում» գրքի մեջ յեր. 175-9

1918 թ. սկզբին Լենինգրադում հաշվվում էր 66 արհմիություն և նույնպիսի անուններով.

1. Մետաղագործների,
2. Հնոցապանների,
3. Զուլողների,
4. Մետաղագործների և հրեղարիչների (сварщиков и огнепечников — կտողներ),
5. Կառավարագործների (модельщики),
6. Ոսկերիչների և արծաթագործների,
7. Ժամագործների,
8. Ելեքտրագործների (электрики),
9. Մեքենավարների,
10. Բրակ հանողների (ապրանքնատեսներ браковщиков),
11. Զուլահանների,
12. Քիմիական աշխատավորների,
13. Պարֆյունիերների, — (ոժանելիք պատրաստողներ)
14. Կաշեգործների,
15. Տպագրական գործի բանվորների,
16. Հարստարապետական կառուցողական բանվորների,
17. Մարմարագործների և ցեմենտագործների,
18. Կառուցողական վերացուների,
19. Զրմուղու աշխատավորների և շոգեվառարաններ տաքացնողների (отопления),
20. Ծառաբուծականների (зодачи),
21. Փայտագործների,
22. Քաղաքային ծառայողների և բանվորների,
23. Դեղատան ծառայողների,
24. Ալրիկների բանվորների. — (թխվածքներ պատրաստողների),
25. Մագործների բանվորների,
26. Շոկոլադի գործարանի և շաքարեղենի արհեստանոցների բանվորների,
27. Կվաս յեփողների,
27. Կառավարողների և գրողապանների,
29. Հարթողների և դարսողների (каталей и кладчиков),
30. Բեռնակիրների (грузчиков),
31. Շոֆերների և աֆտոմոբիլային տեխնիկների,
32. Կառագործների.

33. Բուժական հիմնարկների ծառայողների.
34. Բուժակներ, բուժակուհիների և մանկաբարձուհիների.
35. Բժշկական միջին կազմի.
36. Ատամի տեխնիկների.
37. Դոնապանների.
38. Դոնապանների և շվյացարների.
39. Տնային ծառայողների.
40. Առևտրաարդյունաբերական ծառայողների.
41. Դեղավաճառանոցների, պարֆյումերային գործարանների, լաբորիատորիաների և այլ նման ձեռնարկությունների և սնանկ գործարանների ծառայողների և բանվորների.
42. Դործարանային ձեռնարկությունների ծառայողների.
43. Տախտակ պատրաստողների ձեռնարկություններ և ծառայողների.
44. Փոխադրական, ավանդադրական և եքսպեդիցիոն դը բասենյակների ծառայողների.
45. Առևտրական ծառայողների.
46. Ասեղի բանվորների.
47. Շոգեշարժ և վոչ շոգեշարժ նավերի ծառայողների (ROMANHA).
48. Փոխադրական պրոմիսյայի ծառայողների.
49. Խոհարարների.
50. Թղթի արտադրություն.
51. Կարտոն շինողների (КАРТОНАЖНИК).
52. Ծխախոտագործների.
53. Ապակու, ճենապակու և հախճապակու (չինի) արտադրություն.
54. Յերկաթուղային արհեստանոցների և դեպոյի բանվորների.
55. Փոստ-հեռագրական.
56. Բաղնեցականների.
57. Լվացարարների.
58. Վարսավիրների.
59. Լուսանկարիչներ (աշխատավորների).
60. Դերեզմանտան և յեկեղեցական ծառայողների.
61. Պարտիզպանների.
62. Թատրոնական գործի ծառայողների.
63. Վարկային հիմնարկությունների ծառայողների.

64. Խնայողական գանձարկողների ծառայողների,
65. Պետական գանձարանի (КАЗНАЙЧЕСТВО) ծառայողների.
66. Ուսուցիչների.

Այս ցուցակը, վոր բերված է Տոմսկու բրոշյուրում *) լրիվ է, «Այն ժամանակ արհեստակցական միությունների թիվն անկասկած աճելի յեր, վորովհետև ցանկի մեջ չեն մտել ազատ արհեստների աշխատավորների և ծառայողների մի շարք մանր միություններ»։ Բացի դրանից ցանկի մեջ չկան լեռնագործների, շաքարագործների և այլ միությունները վորոնց արտադրական բազան Լենինգրադում չեր, այլ զավառներում։

Բայց արդեն տարի ու կես անց, շնորհիվ արտադրական ձուլման, 1919 թ. ոգոստոսին ամբողջ Հանրապետության մեջ պահպանվեցին միայն 33 միություններ **):

1. Դեղատնային (հետագայում միացավ բժշկա-սանիտարականի հետ)։
2. Ֆինանսական ծառայողների Համառուսական միություն. (հետո միացավ ծառայողների միությանը)։
3. Բանկային աշխատավորների (հետո դարձավ ծառայողների միություն)։
4. Ֆինանսական և դրասենյակային ծառայողների. (հետո միացավ ծառայողների միությանը)։
5. Հրդեհաշիջների (հետո միացավ կոմունալնիկների հետ)։
6. Վարսավիրների (հետո միացավ կոմունալնիկների հետ)։
7. Տնային ծառայողների (հետագայում մի մասը միացավ կոմունալնիկներին, մյուս մասն էլ ժողովներին),
8. Բժշկա-սանիտարական Համառուսական միություն.
9. Լեռնագործ բանվորների.
10. Փայտագործների (деревообделочники)։
11. Հողի աշխատավորների.
12. Առնառագործների (հետո մտավ հողանտառի մեջ)։
13. Գեղարվեստի աշխատավորների.
14. Կաշեգործների.
15. Մետաղագործների.

*) «Անարկներ Ռուսաստանի արհեստակցական շարժման մասին», յեր. 15—17.


**) Տես «Պրոֆեսիոնալիստի ուղեցույց» 1922 թ. յեր. 176—8,

16. Մուկիցիպալ աշխատավորների (վերանվանվեց կոմունիստներին),
17. Քիմիական աշխատավորներին.
18. Ապակու և ճենապակու աշխատավորներին (միացան քիմիագործներին հետ).
19. Տպագրիչներին.
20. Թղթի արտադրություն աշխատավորներին.
21. Ժողովրդական սննդի աշխատավորություն (Նարպիտ).
22. Սննդամատակարարներին,
23. Ժողովրդական լուսավորություն աշխատավորներին.
24. Շաքարագործներին.
25. Ժողովրդական կապի աշխատավորներին.
26. Հիմնարկությունների և ձեռնարկությունների ծառայողներին,
27. Կառուցողներին.
28. Ծխախոտագործների (միացան սննդամատակարարներին).
29. Զուլհակներին.
30. Փոխադրողներին.
31. Կարողներին.
32. Զրային տրանսպորտի աշխատավորներին կենտկոմ
33. Յերկաթուղայինների արհմիության կենտկոմ.

Ներկայումս կան միայն 23 արտադրական միություններ, վոր ընդգրկում են Խորհրդային Միության պրոլետարիատին.

1. Մետաղագործներ,
2. Զուլհակներ,
3. Լեռնագործներ,
4. Քիմիական արդյունաբերություն աշխատավորներ,
5. Փայտագործներ,
6. Տպագրական արտադրության աշխատավորներ,
7. Կաշեգործներ,
8. Կոմունալ տնտեսություն աշխատավորներ,
9. Հողի և անտառի աշխատավորներ,
10. Ժողկապի աշխատավորներ,
11. Ժողովրդական սննդի և հանրակացարանների աշխատավորներ,

12. Սննդամատակարարներ,
13. Լուսավորություն աշխատավորներ,
14. Գեղարվեստի աշխատավորներ (Գեղաշխ)
15. Բժշկա-սանիտարական աշխատավորներ,
16. Թղթի արտադրության աշխատավորներ,
17. Շաքարագործներ,
18. Կառուցող բանվորներ,
19. Տեղական փոխադրողներին միություն,
20. Խորհրդային աշխատավորներ
21. Կարողներ,
22. Յերկաթուղայիններ,
23. Զրային տրանսպորտի աշխատավորներ.



15. Դործարտեղկեցների կուլտ-
կոմիսյաների կանոնադրու-
թյուն:

5

Մ Ա Մ ՈՒ Լ Ի Տ Ա Կ Ե Ն

16. Ի՞նչ պիտի իմանա ամեն մի մայր—Սպեբանսկու
17. Լենին և արհեստակցական շարժում—Գուրեվիչ
18. «Ի՞նչ է պրոֆմիտիթյան անդամատուը» Տեեսերիս

Պ Լ Ա Կ Ա Տ Ն Ե Ր

19. «Բարձրացրու աշխատանքի արտադրողականությունը» 15 կ.
20. «Վերաշինենք մեր յերկիրը» (5 գույն) 15 կ.
21. «Կարթա» միության վատ անդամի մասին (2 գ.) 15 կ.
22. «Սոցապահովագրության մասին» (4 գույն) 15 կ.
23. «Բառքակ, լսիր Լենինին» (4 գույն) 15 կ.
24. Կառուցող բանվոր հիւրը (կրկնակի) 30 կ.

Դիմել՝ Յերևան Հ. Արհ իությունների Խորհուրդ, № 14 սենյակ

Адрес: Эривань С. 11. С. Арменнии комната № 14

ՀՀ Ազգային գրադարան



NL0863942

59

19

II

24226

